ՀԱՆԴԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ԵԼՔ Ի ՄԱՍԻՍ

ՅԱԿՈԲ ՊՐԱՅՍ ԱՆԳԼԻԱՑԻՈՅ

Ջ' 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1876

Մօտերս ազգային լրագիրք մեր այլ և այլ պատճառաւ յիշեցին Յակոբ Պրայս, James Bryce, Անգղիացին, որ թէ գրագիտութեամբ և թէ լեռնաքնին հմտութեամբ (այսինքն բարձր լեռներ ելնելու և քննելու) ծանօթ էր, և աւելի ծանօթ կ'ըլլայ վերջին լեռնագնացութեամբն 'ի Կովկաս և Մասիս՝ իբր երկու տարի առաջ, և հիմա քաղաքագիտական խնդրաք ալ։ Իր ճանապարհագրութիւնն անուանած է Անդրակովկաս և Արարատ, Transcaucasia and Ararat, և համարի իբր Դաւնօրդութիւնք Շրջագայութեան յաշնայնի 1876, Notes of a Vacation Tour in the autumn 1876. որ տարի մը չանցած երեք անգամ տպագրեցաւ և յօտար լեզուս ալ թարգմանուի։ Եւրոպական Խուսատանէն իջած է 'ի Կովկասեան գաւառս, և Ալանաց (Ցարիալ) գունէն անցնելով մտեր է 'ի Տփղիս, և վրաստանէն անցեր է 'ի Հայս. գլխաւոր նպատակն ըլլալով ելնել քննել զՄասիս, զոր ինքն միշտ Արարատ կոչէ. և երկար և ստոյգ տեղեկութիւններ առած կ'աւանդէ թէ այս անուան վրայ և թէ լերին անցեալ յիշատակաց և իրմէ առաջ ելնոյն քննողաց. որք ազգայնոց արդէն բաւական ծանօթ ըլլալով՝ միայն իր անձամբ 'ի Մասիս ելնելուն պատմութիւնը կը թարգմանենք, հազիւ քանի մը բան դուրս թողլով, որպիսի են և այն խօսքերը՝ որ կ'ակնարկեն գրոց ճակատը դրած Մասեաց պատկերը, զոր ինքն առած է ամենէն առաջ Մասեաց գագաթն ելնող Բաւոդ Գերմանայոյն գրքէն, և քիչ մը փոփոխեր է. մենք զայն պատկերը չունենալով՝ ուրիշ պատկերք կը ներկայացընենք, որ է երկու Մասեաց տեսքն յերևանայ և 'ի Պայէզիտայ։ Իր գրուածքին գրեթէ քառորդն Արարատայ վրայ կը խօսի, և ասնոր կիսէն աւելին է իր ելից պատմութիւնն զոր հրատարակեմք. և է էլ գլուխ գրոցն. որոյ յաջորդ ըՙ ալ խօսի էջմիածնի վրայ և Հայոց այժմեան և ապագայ վիճակին վրայ. և յետոյ նորէն յերևան դառնալն և Տփղեաց երկաթուղւոյ ճամբով երթալն 'ի Բոգի, և անկից 'ի Պաթում, ուսկից Սև ծովու եղերքով կը նաւէ 'ի Կ. Պոլիս, հօն աւարտելով իր ճանապարհագրութիւնը. յետոյ գլուխ մը բան ալ կ'աւելցընէ քաղաքական տեսութեամբ, դարձեալ քննելով Հայոց ներկայն և ապագայն։

digitised by A.R.A.R.@



ՏԵՍԻԼ ՄԱՍԵՈՑ Ի ԵՐԵՒԱՆԷ

digitised by A.R.A.R.@

Սեպտեմբեր ամսոյ 11ին (1876), օրհասարակէն չորս ժամ առաջ՝ մեկ-նեցանք Արարատ գեղէն (որ Մասիսի հիւսիսային արևելեան կողմն է) եկնելու ի լեռը։ Որոշեր էինք արևն ծագելու ատեն կանուխ ճամբայ ելնել. որպէս զի ճամբուն առջի մասին սաստիկ տաքէն ազատ ըլլանք։... Ընդ ամենն ինն հոգի էինք. վեց խաղախ զինուոր, պարոն Թարգմանն և ես իմ ընկերովս։ Հրամանատու զինուորն էր ձեռքիս անուամբ Գուրգ մը, զօրաւոր մտոք և մարմնով, որուն վրայ մեծ վստահութիւն ունէր Թեւապետն. իր ընտանի և աշխոյժ բարքն ալ մեր յօժարութիւնը կը շարժէին հետը վարուելու։

Յիշելով որ հինգ տարի առաջ ամսոյս այսն օրը ճամբայ ելեր էի Շրէքհոռն[1] լերան վրայ մագլցելու, իրեք տարի առաջ ալ Մալատէդդա լերան վրայ, կը ղուարճանայի, բաղդատելով այս անանման հեծելութիւնը՝ այն բարձրախօս Անգղիացւոց և ուժեղ առաջնորդաց հետ, որք արշալուսէն առաջ կ'ելնեն Ալպեան պանդոկէ մը՝ լերան գագաթը բարձրանալու կամ կիրճէ մը անցնելու։ Ամենքս ալ հեծած էինք, բայց յայտ է թէ ոչ պանծալի արշաւանքի մը, աւելի լրտեսաց կամ ապատակի երևոյթ մ'ունէինք, իբր թէ հալիւ վեց մղոն հեռու Պարսից սահմանին գեղի մը վրայ պիտի վազէինք։ Խաղախք ազէկ զինուած և հագուած էին. իսկ բարեկամս և ես՝ բաց ի մէջքերնիս դրած ատրճանակներէն, կը չողցընէինք մեծ սառնահատ կացիններ, բաւական ճարտարութիւն պէտք էր ասուց հետ մէկ տեղ բռնելու ձիոց սանձը և մեծ ճերմակ հովանոց մը։ Հովանոց մը և ձի մը՝ անշուշտ շատ չեն յարմարիր մէկմէկու, մանաւանդ յեր լերանց. բայց մենք յանձն կ'առնուինք աւելի ծաղրելի կերպարանք ալ ունենալ, քան թէ անամէ երկնից չող ճառագայթներով խայթիլ, զոր և կ'անդրադարձընէին մեզի դէմ այն սպիտակ ամպերէն որոց վրայ կ'երթայինք։

Արարատայ ամենէն հեռագոյն և ամենէն դիւրագնալի փէշէն կ'երթայինք, հարաւային կողմէն, որոյ գետինն էր բարակ աւազ մը կամ գեղին խիտ կաւ մը, կարճիկ փշոտ և դրեթէ անտերև թուփերով ծածկուած. բայց ոչ կանաչ կար և ոչ կենդանի, բաց ի գունագոյն թիթեռնիկներէ և մոզէղներէ։ Ամեն մղոն իրմէ առջինին նման էր. միակերպ տափակ և նշան մը չունող գետին մը՝ չէր թողուր մեր յառաջադիմութիւնը չափելու. օդն ալ այնպէս յատակ և պայծառ էր, որ երեք ժամ յառաջ երթալէն վերջ ալ՝ լեռն աւելի մօտ չէր երևեր քան որչափ որ կ'երևէր Արարատ գեղէն։ Լերան հարթ և անկերպարան գաւակին վրայ նայելով՝ անոր կոնաձև մասին խարբսխէն զմեզ շատ հեռու չէինք կարծեր։ Իսկ տաքն մեր կարծածէն շատ աւելի սաստիկ էր. և անշուշտ այն երիցս օրհնեալ հովանոցին ազատեցին զմեզ արևազարկէ մը. գլխի ծածկոցնիս էր թեթև և լայն թաղիքէ, մինչդեռ խաղախք իրենց ամրակուռ գլխարկներն ոչխարի մորթէ թանձր խոյրով ծածկեր էին։ Սակայն տաքն ջնատիչ չէր. օդն այն զովաբեր ախորժը կ'ազդէր, ինչ որ կ'ըսեն թէ Արարիոյ անապատից մէջ կ'ըլլայ՝ առաղջարար. և լերան փայլփայլուն գագաթան տեսքն, որ կը սկսէր հիմայ արևելեան դեղեցկի մը պէս՝ երեսացը վրայ առնուլ միջօրէի ամպոց քօղը՝ կարծես թէ մեր տապագին երակաց մէջ զովութիւն մը կը շնչէր։

Քիչ մ'ատենէ վերջ գետինն սկսաւ անհարթանալ, երբ հասանք տեղ մը՝ ուր ձմեռնային հեղեղք հրաբուխի երկիրը խոր խոր կտրտեր էին. լերան գաւակն սկսաւ աւելի կորանալ, օդն ալ աւելի զովանալ՝ քանի որ դէպ ի վեր կ'ելնէինք, մինչդեռ մէկ երկու

[1] Զուէյերեի Գեռնա նահանգին մէջ է, 4097 մեգր բարձր։ Մալատէդդա՝ Պիւրենեան լերանց բարձրագոյնն է, ընդ մէջ Սպանիոյ և Փռանկաստանի, 3403 մեգր։ Իսկ Մեծն Մասիս է 5156 մեգր։ Մեր հեղինակն իր ազգային անգղիացի ոտից չափը կը գործածէ, որում Մասիս կ'ըլլայ իբր 17000 ոտք։

digitised by A.R.A.R.@

ամպ ալ լեռնէն բաժնուելով և կապուտակ երկնից վրայ սահելով՝ մեզի շուք կը շնորհէին։ Օրհասարակին Արարատայ կողից վրայ էինք, և կ'իմանայինք որ ամեն մէկ քայլերնիս մէկմէկ վատակ էր։ Հոս լերան զանգուածէն դուրս կը ցցուի՝ մեծ բոլորշի գմբեթաձև մաս մը իբր 7000 ոտք բարձր, և անշուշտ մէկ կամ երկու հրաբղխային պատառուածքէ ձևացած է. և է սա մէկ մը'ի մեծագոյն կոնից կամ կոնաձևի շարքերու՝ որ մեծ լերան վրայ դուրս ելած են։ Այս կոնս կոչուի Թաքեալդու, զոր պէտք չէ շփոթել ուրիշ համանուն լերան մը հետ՝ Երասխայ վերին հովտին վրայ [1]։ Սկսանք երթալ դէպ այն կէտը՝ ուր այս կոնս կը միանայ ընդ Մեծ Մասեաց, այն ճամբէն՝ որ երկուքին միջէն կը բարձրանայ, և կ'անցնի շարք մը Ժայռուտ կոհակներէ՝ որ լերան արևելեան կողմէն զառ'ի վայր կ'իջնեն։ Բրակողմէն երթալով շատ հեղ կ'իջնէինք ապառաժոտ խորաձորոց մէջ, բայց անոնց յատակը ամենևին հեղեղատ չլոյ չկար. Սրսուէքի կրային երկիրներուն պէս չոր էին։ Այս ճամբան հանեց զմեզ փոքրիկ դալար դաշտակի մը, որոյ եզերքն կային կոհակաց երկուքն, երրորդ կամ արևելեան կողմէն ալ Թաքեալդուի բարձունքն էին. ուր զարմացմամբ տեսանք պզտի արտեր, և մէկ կամ երկու մարդու կնիկ աշխատող, մտերներն ալ շարք մը քարով ու հողով շինած հիւղեր։ Ճեռաֆար քշեց ձին դէպ'ի մարդիկը, և հարցուց թէ արդեօք քանի մը ֆուրդք կրնային գալ մեր բեռներն'ի լեռ հանելու իրենց եզներովը. իսկ մենք՝ լսելով որ մտերը աղբիւր մը կար, կը յուսայինք խմել. վերջապէս մարդ մը եկաւ կոչտ փայտէ գուշ մը բերաւ. բայց չլրնտեղ տղմաջուր տեսնելով՝ լաւ համբեցանք ծարաւ մնալ քան զայն խմել։ Այս մարդիկս ֆուրդք էին, և այս տեղս իրենց սակաւաթիւ աշնանային կամ գարնանային հանգրուաններէն մէկն էր. ուր ծովուն երեսէն 6000 ոտք կամ աւելի բարձր ըլլալով՝ ձմեռը հօն չեն կենար, և այս եղանակիս ալ սկսեր էին աւելի բարձր արօտներէն վար իջնել։

Սկսանք նորէն վեր ելնել, լեռը պատելով հարաւային կողմէն, անոր կողէն իջած ժայռոտ կոհակներուն շատին վրայէն անցնելով. ճամբան տեղ տեղ անանկ կոր և ցցուած էր, որ ստիպեցանք իջնել ձիերէն և զանոնք քաշել։ Այս ժայռերուն մէջ կը բուսնէին վարդի թուփեր, բաւականք յոգեվառել Պարսից ամեն բանաստեղծները. ամենքն ալ ծաղկաթափ և պտղի հասած էին. կրնայ երևակայուիլ թէ ինչ աքանչելի տեսարան պիտի ըլլայ յուլիս ամսոյ մէջ, երբ բոլոր լերան կողն այս փափուկ բոյսերով փթթած ըլլայ, երբ ես անոնցմէ մէկ հատն միայն տեսեմ թերի մէջ մնացած տեսայ, և անուշակ հոտն բարակ լեռնային օդուն մէջ սփռած։ Երբ վերջին կոհակին քովէն կ'անցնէինք, փոքր Մասեաց կոնաձև գագաթն յերևան ելաւ, որոյ խարիսխն երկու մէրն հեռու էր, բացարձակ գաւակի մը վրայ, և անմիջապէս մեզմէ վար կոհակին տակ Քրդաց ճամբար մը կար. չորս կամ հինգ վրանք քովէ քով դալար դեռնի երես՝ցած ձողերու կամ ցիցերու վրայ կանգնած, և սև այծու մազէ հիւսուածով ծածկուած, ծայրերնին ցիցերուն գագաթը ժողոված, մէջ տեղն ալ խաչաձև ձողերով բարձրացած. պատերն, եթէ կըրնանք պատ ըսել, եղեգով հիւսած. նոյնպիսի եղեգէ հիսուածք մ'ալ՝ քիչ մը բրդով կամ լաթով պատած՝ վրանին մէջ տեղէն կախուած է, կանանց և արանց բնակարանը իրարմէ զատելու. թէպէտ այս բանս աւելի սովորութեան համար է քան թէ պարտկելու. վասն զի դուրսը կեցողն ալ բնակարանին ամեն անկիները կըրնայ տեսնել։ Մեր ծարաւն անցընելու համար բերին մեզ դուշերով թթխուած կաթ կամ մածուն ըլլախառն, որ այս կողմերուս սովորական ըմպելիքն է, և մեզի զովարար եկաւ, թէպէտ և նուազ ախորժահամ քան զըլով կաթն Զուիցերիի փայտէ դարպասաց (châlet).

1 Հայք Բաքդալ կ'անուանեն այս յեռենս։

digitised by A.R.A.R.@

Հինգ վայրկեան ալ ձիավարելով խոտագետին գաւակին վրայ, հասանք ուր որ շատ անգամ և մեծ փափագանաք կը հարցընէինք, յԱղբիւրն Սարտարպուլուգ։ Լերան վրայ մինակ այս տեղս է Ճնայուն բարձր ճամբարատեղի կամ գաղարը, և մէկ հատիկ տեղի ալպեան պանդոկ մը հաստատելու, եթէ այսպիսի չէնք մը պիտի հաստատուի յԱրարատ։ Սարտարպուլագ մէկ ընդարձակ կիսաբոլոր հովտի մը կենդրոնն է, կամ թէ երկուց Մասեաց միջավայր գաւակաձև տափակի մը վրայ. դէպ 'ի Մեծն Մասիս՝ որ յարևմտեան կողմն կ'ինկնայ, գետինն կը բարձրանայ, նախ յուշիկ, վերջը շատ զառիվեր, կարգ մը ժայռոտ կոհակներով գրեթէ հաւասար բարձրութեամբ, և իրարմէ նեղ ու երկայն խոռոչներով զատուած, որոց շատը կը ձգուին դէպ 'ի Մտ. Հիւս. Մտ. Ա. եղ. Հար. եղ։ Այս տափակէն նայելով՝ կոհակներն իրը հինգ մղոն հեռու կ'երևան լերան մեծ կոնաձևէն, որուն գագաթն ուղիղ դծով օդուն միջէն վեց կամ եօթն մղոն հեռու կ'երևի Սարտարպուլագէ, բայց ոտքով երթա-



ՏԵՍԻԼ ՄԱՍԵԱՑ Ի ՊԱՑԷԼԻՏԷ

լու համար կրկին աւելի միջոց կայ։ Տափագետնիս միւս կողմը, այսինքն հարաւային արևելեան՝ կը բարձրանայ փոքրն Մասիս 5000 ոտք 'ի վեր, կաւարեալ գլխատ բրգան ձևով, կորաձև ողորկ կողերով, որք և կանաչով ծածկուած են. բայց 'ի այն տեղերէն որ խոր խոր ճեղքուած են, և լերան գագաթէն ինչուան 'ի յատակն կ'իջնեն՝ 'ի խիճ և յաւազ՝ որ նոյն կողերէն կը սահին։ Եթէ գետնին վրայէն ուղղակի գիծ մը ձգուի՝ լերան գագաթն չորս մղոն, խարիսխն երկու մղոն հեռու կ'ըլլայ։ Եթէ Մեծն Մասիս վեհամգոյն է 'ի լերինս, փոքր Մասիս ալ գեղեցկաձև քան զամենայն լերինս. ոչ երբեք կը յոգնին աչք անոր գեղեցիկ գծերուն նայելով։ Երկու լերանց գագաթունքը կը կապէ մէկ կոշտաբոլոր կոհակ մը՝ որ կը ձևացընէ վերոյիշեալ տափակ գաւակին կոնաձևը, և միանգամայն սահմանագիծ է Ռուսաց և Օսմանեանց պե-

digitised by A.R.A.R.@

տութեանց։ Անոր վրայէն կ'անցնի Պա-
յեզիտի ճամբան, որ իբր 19 (անգղիա-
կան) մղոն հեռու է դէպ յարեւմտեան
հարաւ, մինչդեռ հինգ մղոն հեռու
դէպ յարեւելք փոքր Մասեաց արեւելեան
հիւսիսային կողմն Պարսից Շահին սահ-
մանն է։ Այս նկատմամբ այս տեղս շատ
յարմար է աւարառութեան գործոց.
որովհետեւ եթէ մէկ կողմէն հալածուին
աւազակքն՝ շուտ մը կ'անցնին մէկալ
երկու սահմանաց մէկին վրայ, և կը
ծաղրեն արդարութեան պաշտօնեայնե-
րը։ Անոր համար Ռուսիա որ իր սահմա-
նակիցներէն աւելի հոգ ունի ապահո-
վութեան, հօս փոքրիկ սահմանապահ
դունդ մը հաստատած է, եօթն կամ
ութ զինեալ խաղախաց, որք կը յիշե-
ցնեն Քրդաց թէ կայ Շար մը (կայսրն
Ռուսաց), և կը դիտեն սահմանաց վրայ
աւազակողները, երբ ատոնք Պարսից
կամ Օսմանեանց հողուն վրայ պահուրտ-
տելով՝ յանկարծ Երասխայ հովտին վրայ
կը յարձակին բան մը կծելու։ Յառաջ
քան զ1828, երբ դեռ Պարսիկք տէր
էին հիմակուան Ռուսաց Արարատայ
մասին, այս Յարտարպուլադայ տափա-
ղակն ալ աւազակ Քրդաց հաստատուն
ամրոց մ'էր, որք ոչ միայն այս Պայե-
զիտի ճամբէն անցնողները կը կողոպ-
տէին և կը սպաննէին, այլ և անդադար
կ'աւարէին դաշտին գեղերը և վաճա-
ռականութեան երկու բարձր ճամբա-
ները՝ որք լերան երկու կողմէն կ'անց-
նին, մէկն Թիֆլիզէն և Երեւանէն 'ի
Դավրէժ տանելով, միւսն Տրապիզոնէն
և Էրզիրում 'ի նոյն Դավրէժ։ Բայց հի-
մայ ամէն բան փոխուած է. Քուրդք
կը ճանչնան և կը վախնան Ցարէն. ան-
շուշտ փափաղանօք կը հառաչեն ան-
ցեալ ժամանակին, բայց քանի որ լե-
բան այս կողմն են՝ կը խնայեն Հայ գե-
ղացւոյն և անցորդին, լաւ գիտնելով որ
միւս կողմը ուզած խաղերնին կրնան
խաղալ։

Այս տափարակ գաւակին բարձրու-
թիւնն է յերեսաց ծովու 7000էն ին-
չուան 8818 ոտք (անգղիական), վերջի
թիւն է Պայեզիտի ճամբուն բարձրու-
թիւնն. իսկ Յարտարպուլադայ բար-
ձրութիւնն է 7514 ոտք. իր կուտա-
կեալ հրաբղխի բլրակքն լաւ կանաչով
ծածկուած են. և իբրև մղոն մը հեռու՝
փոքր Մասեաց ստորոտը՝ կայ միակ
անտառն բոլոր լերան, որ է խումբ մը
ցած բարտի ծառոց, զոր ապականիչ
քուրդք շուտով կը պակտեցընեն։ Այս
ծառատուտին քով ստորերկրեայ գե-
ղի պէս տեղ մը կայ, գետնի մէջ
փորուած հիւղերով ծածկուած,
վրան ալ հող, մէջ տեղն ալ լուսան-
ցոյց ծակ մը։ Շատ հեղ անբնակ կը
մնան հիւղերն. կարծեմ թէ միայն
ցուրտ եղանակին անոնց մէջ կը քա-
շուին քուրդք։ Կ'ըսեն թէ ատենք Հա-
յոց գեղ մ'էր տեղն՝ ուր քշեր էր զա-
նոնք Պարսից Սէրտարն, բայց երբ ա-
նոր իշխանութիւնն վերցուեցաւ՝ իրենք
ալ անկէ ելան։ Սէրտար՝ կը նշանակէ
հրամանատար կամ զլխաւոր, և Պար-
սից կողմանէ Երեւանի կուսակալն այս-
պէս կ'անուանէր. ուրեմն Յարտարպու-
լադ ալ՝ Սէրտարի Աղբիւր ըսել է։ Այս
ըմպելի ջրոյն պատճառաւ է որ քուրդք և
խաղախք հօն կը բնակին, վասն զի ակէ
զատ ինչուան Ակռի, որ չորս ժամու
ճամբայ է, ուրիշ մշտաբուղխ աղբիւր
չկայ։ Հաւանօրէն Պարսիկ Սէրտար մը
հօն պահապան զօրքեր դրած պիտի ըլ-
լայ՝ երբ Օսմանեանց հետ կը կռուէին։
Ակէց աւելի զուարճալի սահմանապահ
կայան մը չի կրնար գտուիլ՝ Երասխայ
տապագին հովտին մէջ. անուշակ զով
օդ, գեղեցիկ տեսարանք լերանց և դաշ-
տաց յարեւելակողմն, երկու կողմէն
մէկմէկ հրաշագիտակ գագաթունք։
Ռիֆֆիէլ կամ Էկեկիչհոռն լեռները սի-
բողք՝ կրնան հօս ալ զուարճանալ։
Բայց հաւանօրէն մենք քիչ աւելի կը
մնածէինք այս զբօսանաց վրայ՝ քան
Պարսիկ պաշտօնեայք ժամանակին, երբ
կը տրտնջային քաղաքաց հեշտութենէն
զրկուելնուն վրայ. վասն զի ժամն եր-
կուք էր, և մենք դեռ ժամերով հեռու
էինք լերան կոնէն։ Որոնք որ մեզի հետ
լեռ ելլելու վրայոք խօսեր էին՝ ամենքն
ալ նոյն բանը ըսեր էին. միայն մէկն,

digitised by A.R.A.R.@

Պարոն Ճարոյեան, որ Խօտաքոյի հետ եկեր էր 'ի Մասիս, ըսեր էր. եթէ բաղդ ունենաք եկնելու 'ի գագաթն՝ միայն կը յայտնէք որչափ կարելի է բարձր տեղ գիշերն անցընելով, ձեան սահմանին մօտ, և երկրորդ օրն լուսացած դէպ 'ի գագաթը գիմելով։ Արդ գիտնալով որ շատ ատեն պէտք է այն բարձրութեան հասնելու և համոզուելով անոր ըսածին ստուգութեանը։ մեծ հոգով կը փափագէինք կոնին ստորոտը հասնիլ գիշերն չհասած, այսինքն իբր 11000 ոտք բարձրութեան։ Ճապարել չիտակ վեր ելնել չէր ըլար, վասն զի ձիանքն ասկէ անդին չէին կրնար երթալ. խաղալիք ալ բացարձակապէս հրաժարեցան մեզի գիշերօթելու համար հարկաւոր եղած քանի մը բաներէ կրելու. պէտք եղաւ որ քուրդեր ճարենք մեզի. բայց ասոր համար այլ երկար ատեն պէտք եղաւ. վայրկեաններ և կէսժամեր անցան ինչուան որ ձեաքար գտաւ ու բերաւ զանոնք՝ բեռնաւորած մեզի պէտք եղած բաներով։ Երբ որ հասան՝ սկսաւ վարձուց սակարկութեան անվերջանալի խնդիրն. ինչ բան էր ըսածնին չէինք հասկընար, վասն զի և ոչ իսկ ձեաքարի հետ՝ որ ռուսերէն գիտէր՝ կրնայինք խօսիլ ուղղակի, մեր թարգմանն ալ քրդաց լեզուն չէր հասկընար։ Շատ ծանր վիճք է պարզ մարդկային խընդրոց պատճառաւ արգելուիլ լեռնային ելից վրայ. և հիմայ մենք հօս կատարեալ բանտարգել էինք, երբ մէկ կողմէն կը տեսնէինք որ փառաւորդ ձիներն մեզի նշան կ'ընէին վերէն, մէկալ կողմէն այն վայրկեաններն որ դժուարութիւնները պիտի յաղթոյցընէին՝ 'ի զուր կ'անցնէին վիճաբանութեամբը զոր ոչ դադրեցընել կրնայինք և ոչ ալ հասկանալ։ Քանի մ'անգամ ստիպելով նշան ըրինք որ ինչ ալ ըլլայ ինչ ծախք ալ ըլլայ՝ շուտով ճամբայ ելնենք. բայց ամեն պզտիկ բանի ալ քուրդք՝ որ արդարև բնութեան տղայք են, դժարութիւններ կը գտնէին. և ինչ որ իմացայ՝ չէին ուզեր փախցընել այս առիթը կերցածնուն չափ զմեզ սղմելու։... ձեաքար կ'ուզէր որ քրդաց եկներով մեր բեռները հանել տայ ինչուան Ճրդնարան ըսուած տեղ մը, ուր ճգնաւորի խրճիթ չկայ, այլ կանաչ խոր մը ժայռերու մէջ, ուր երբեմն ջուր ալ կը գըտնուի, Պարտարպուլադէն 2000 ոտք վեր, ուր կրնայինք ալ քնանալ, կամ հօն թողլով անասունները՝ աւելի վեր ելնել գիշերն չհասած։ բայց այս վեճերով ժամն չորս ու կէսն անցաւ. գոնէ կէս ժամմ'ալ պէտք էր բեռնաւորելու և ճամբայ ինկնալու համար. ըսել է որ հազիւ ժամ մը լուսոյ կը մնար աւելի բարձր գիշերօթի տեղ մը գտնելու, ուր անշուշտ աւելի դժար պիտի ըլլար քնանալ՝ քան թէ հօս ուր խաղալիք մեզի համար վրան մը կանգներ էին։ Կամաւ ակամայ համբերելով եղածին, և բաղդերնիս վաղուան թողլով, առաջարկեցի որ մնանք և քնանանք 'ի Պարտարպուլադ, և կէս գիշերուընէ ետև երբ լուսինն ծագէ՝ մէկէն ճամբայ ելնենք։ Այս բանիս՝ որովհետև ուշանալու խօսք էր՝ մէկէն հաւանեցան. ձեաքար չորս քուրդ բռնեց որ գան մեզի հետ և բեռներնիս առնուն, այսինքն քնանալու համար ծածկոցներ և քիչ մը ուտելիք, որ Զուիցերեաց համար մէկ ու կէս բեռ են, եօթն ալ խաղախ պահապան ուղեց դնել, ոչ պատուոյ համար, այլ աւելի այս կատաղի քուրդերէն պաշտպանելու համար, որ ինծի շատ ձառադէմ կ'երևային՝ բայց ոչ ահաւոր։ Այսպէս ալ եղաւ։ Զեմ գիտեր թէ ըսինք անոնց որ մեզի եօթն խաղախ շատ են, բայց կարծեմ որ խաղալիք յանձն չառին եօթէն պակաս մէկտեղ մնալու. այնքան լերանց և քրդաց վախն տիրած էր վրանին։

Երբ այս ամեն բան լմընցաւ՝ նոր տեսարան մ'ալ բացուեցաւ որ մեր անհամբերութիւնը հանդարտեցուց։ Խաղախաց երկու վրաններն Պարտարպուլադայ աղբիւրէն քառասուն կանդուն մը վեր կանգնած էին խոտաւէտ գաւակի մը վրայ. ուրիշ գոնդ մը քրդաց եկան իրենց անասնոց ջուր տալու աղ-

digitised by A.R.A.R.@

բիւրէն, փոքր Մասեաց կողէն անցնելով Պարսից երկրէն, իրենց զով արօտ գտնելու եկած։ Աղբիւրն երկայնաքաշ ծակ մ'է իբր 10 ոտք երկայն, հինգ լայն, լաւայի քարերով բարակ պատով մը պատած. միջի ջուրն երեք ոտք խոր կ'երևի առաջին նայուածքով. պատին ներքևէն կ'երևի բուն ակնէն ելած ջուրն պայծառ, զով և անոյշ. որովհետև ա. նասնոց խմելու համար աղբիւրն շատ խոր է, չորս դին արօտին վրայ գուրեր փորած են. ջրդաց տղայք և աղջկունք պզնձէ ամաններով անոնց մէջ ջուր կը լեցընեն որ անասունք խմեն։ Ոչխարներն՝ որոց բառաչն օդը կը լեցուներ, մեծաւ մասամբ կամ բացագոյն թուխ էին կամ սեւ կամ ճերմակ, և ոչ շատ աւելի մեծ քան Պկովտից բարձրավայրաց ոչխարներն. իսկ այծերն ճիշդ ա. բեւելեան էին, մեծաւ մասամբ ճերմակ, երկայն կակուղ մազերով, լայն և կախ ականջներով, (Գ. Հոլման Հընդի նկարած նոխազին նման)։ Երկու ժամի չափ տեւեց ջուր խմցընելն. տըղայք աղջկունք և կանայք անդադար կ'երթային կու գային աղբեր չորս կողմը, ջուրը հանելով, ինչուան որ գրեթէ ցամքեցուցին, մենք ալ երբեմն կ'օգնէինք անոնց։ Բայց անոնք հաղիւ թէ ֆռանկ օտարականաց վրայ կը նայէին, կամ հետաքրքիր չըլլալով, կամ իրենց գործին շատ զբաղած ըլլալով։ Ամենքն ալ ուժով և ջղուտ էին. կանայք ընդհանրապէս այրած դեղնած, բայց աղջկանց և տղայոց դէմքն գեղեցիկ և գունաւոր, ամենուն շարժուածքն ալ վայելուչ։ Իրիկ մարդկանց, որ հօս սակաւաթիւ էին, զգեստն ինչուան ծունկերնին կը հասնէր, ոմանց բրդէ և ճամկաւոր, ոմանց այլ այլատարազ խոշոր տպած հնդկական։ վարի զգեստն ալ ինչուան կէս ծունկերնին, անկէ վարն ալ պատատներով և կօշկով կամ սանդալով ծածկած։ Ամենքն ալ դանակ մը կամ թուր մ'ունէին. ոմանք մեծամեծ հին ատրճանակներ, ոմանք մեծ ու պզտիկ հրացաններ։ Գլուխնին բրդէ խոյր մը՝ մետաքսէ կամ բամբակէ պատատներով մեծ փաթթոց մը ձևացուցած։ Իսկ կանանց զգեստն աւելի պայծառ գունովներով էր. իրենց ճակատոր կամ ասղնեգործ բաճկոնեներն և անոնց ներքևի բամբակէ զգեստն՝ շատ վայելուչ, գլխագիրներն սովորաբար կարմիր կտաւէ էր։ Քիներնէն և ականջներնէն գոհարեղէններ կախուած, վզերնուն վրայ ալ շատ մը զարդեր, ոսկի և արծաթի դրամից շարք, կամ ուլունք և գոյնագոյն քարեր. բացագլուխ աղջկունք անգամ՝ որոց հիւսուած մազերն ուսերնուն վրայ սփռած էին, այս վզի մանեակներն ունէին։ Ընտանի իրենց մահմետական դաշտային քուրերուն՝ երեսներն քօղապատ չէր, և մեր կամ թաղախաց առջև վախ կամ քաշուիլ չունէին. ամենքն ալ կատարելապէս վրհկայ պէս՝ ձեռուընին իլիկ մ'ունէին, բուռ մ'ալ բուրդ, և անասուններն քշելու ատեն կը հիւսէին։ Դասպիսի նկարագիր տեսարան մը՝ որ մոքերնուս կը բերէր աշխարհիս առաջին պարզունակ կեանքը, այսպէս անփոփոխ մնացած մարդկութեան այս հնագոյն բնակութեան տեղը, երբեք տեսած չէինք։ Հեռուն կ'երևային գեղեցիկ հօտք ա. նասնոց, ընտրանի գոյնք կանանց զգեստուց և զարդուց, իրենց վայելուչ կերպարանքն, աղբիւրին քով շարժմունքն և չչնկոցն, չորս դի տարածուած արօտագետինն՝ մատղաշ փոքրիկ բարտեաց անտառակով։ Երկու կողմէն աշտարակի պէս մէկ մէկ լեռնակոն կը բարձրանար յերկինք. դիմացէն լերան գաւակն կը տարածուէր երասխայ ընդարձակ հովտին մէջ. անկէ անդին լերկ լերանց պար մը շարուած էր, կոհակ կոհակի վրայ դէպ յարևելեան հորիզոն, բոլորն ալ մերկ և չոր, ամեն գագաթ ու խոռոչ՝ կանգնելով սուր սուր պայծառ օդոց մէջ, բայց հեռաւորութեան պատճառաւ փափուկ և անոյշ գոյներ առած։ Հօս, ուր նախնական կենաց պատկեր մը առաձեռն պատրաստ՝ կը մնար ընդարձակ և շատ ազգերէ բնակած երկիրներու, որ կը տարածուէին մինչև Ասիոյ միջերկրեայ ծովը,

digitised by A.R.A.R.@

մարդ կըրնար մէկ նայուածքով երևակերպել անոնց բարքն ու պատմութիւնը, անփոփոխ 'ի միջի փոփոխութեանց։ Ի ժամանակս ինքնակալութեանց Ասորեստանեայց, Պարսից և Մակեդոնացւոց, 'ի ժամանակս Արշակունեան Պարթևաց և Իրանեան Սասանեանց, 'ի ժամանակս տիրապետութեան Աբաքացի Ամիրապետաց, Թուրք Սուլտանաց և Պարսիկ Շահից, այս Քուրդերս կը թափառէին՝ ինչպէս հիմայ ալ կը թափառին՝ մշտնջենաւոր լերանց գաւակաց վրայ, իրենց հօտերուն ջուր տալով այս աղրիւրէն, իրենց այծու մազէ հիւսուած վրանները կանգնելով այս մենաւոր ժայռերու խոռոչներու մէջ, երդելով իրենց վայրենի սրտաշարժ երգերը, ոչ անցեալը մոռնալով և ոչ ապագային վրայ հոգալով։

Երբ մեր լեռն 'ի վեր ելելու կերպն հաստատուեցաւ, դեռ բաւական ժամանակ մը կար՝ Պայէզիտ տանող անցքին կողմէն լերան գագաթին վրայ եկ մ'ընելու։ Մեծ կոնձաձին հարաւային արևելեան երեսն աղէկ մը քննեցի, որ օդուն սքանչելի պայծառութեան մէջ՝ եղածէն շատ աւելի մօտ կ'երևնար, և մարդուս գլուխ մը ձգեցի վաղուան ընելու ճամբուս. ամպերն դեռ լերան գագաթը պատած ըլլալով՝ անկարելի էր որոշել թէ վերնակողմն ալ անկոխելի գահավէժներ կայնե թէ ոչ։ Խաղախնելէն կամ Քուրդերէն լոյս առնելու յոյս չկար. որովհետև ասոնք արօտներէ վեր տեղ չեն ելներ. իսկ անոնք պատճառ մ'ալ չունին այնչափ բարձր տեղ ելնելու։ Մարդ կըրնար միայն լերան կոհակներուն կազմուածքէն գուշակել որ պէտք է ճամբայ մ'ըլլայ, կամ՝ ձիւնագեանին եզերքէն վեր, կամ՝ անոնց միջէն կանգնած ժայռուտ կատարներուն քովէն։ Արևուս մնալու ատեն երբ դարձանք 'ի վրանն, հանդիպեցանք քանի մը խաղախաց, զոր հոգատար ձեռքերն զրկեր էր պեղ գտնելու, վախնալով որ չըլլայ թէ աւազակաց ձեռք ընկնանք, և յանդիմանելու կերպով մը կը նայէր մեզի՝ այնչափ հեռու երթալնուս համար առանց պահապանի։ Ինձի աւելորդ երևցաւ վախնալ։... Ընթերքն պատրաստ էր. խաղախքը իրենց կերակուրն ալ մերն ալ եփեր էին մեծ պտուկի մը մէջ բլրին կողմը վառած կրակի վրայ, որուն բոցովը դուրս կը ցատքէր անոնց դէմքն և անոնցմէ աւելի քրդաց այլատարազ դէմքն, որք կրակին չորս դին կըկոչած նստեր էին՝ իբրև աւազակք թատեր տեսարանի մը մէջ։ Ռուսն եփելու առանձին կերպ մ'ունի. խաղախն թէ և բարակ ճաչակ չունի, բայց ասանկ ճամբարած ատեն Զուավէն նուազ ճարտար չէ։ Կերակրէն ետև, որ խաչած ոչխարի միս էր և կաթն, երկուքն ալ Քուրդերէն առնուած, անհրաժարելի թէյ մ'առինք, և պատկեցանք քիչ մը քնանալու։ Զորս տարի առաջ Սասունստանի (Խլատիա) ձեան տարափոյ տակ վրանի մը մէջ քաշուած էինք... հօս յիրաւի 25 աստիճան աւելի մօտ էինք Հասարաքածին. բայց 7500 ոտք ալ ծովուն երեսէն բարձր էինք, և երբ ցուլտ հովն վրանին պատերը կը ցընցէր՝ կը ստիպուէինք անոր փէշերը ծածկել, դրսէն քարեր և խուխներ կուտելով, և զգեստուց ամէն կտորներով պարտկելուելով։ Այսպիսի առթից մէջ մարդ չուզեր քնանալ. երկայն ատեն վրանէն դուրս կեցանք դիտելու խաղախները և ասաղերը, որոց լուսովը կըրնայինք նշմարել փոքր Մասեաց ձեր դիմացն։ Լեռան լռութիւնն կ'ափշեցընէր զմեզ. ոչ հեղեղք հեղեղաց ձայն կու տային, ինչպէս որ կը լսուին Ալպեան լերանց մէջ, ոչ առուակաց պղպջմանք, ոչ բուսոց սոսափիւնք, և ոչ իսկ թնդիւն ընկած քարի մը. միայն արևմտեան հովուն չչունչն, որ այս կողմիս սովորական հովն է։ Ժամն ինչին մտանք 'ի վրանն և քնացանք։ Կէս գիշերուն՝ բաղդով արթնցանք, վասն զի մէկալ ամէնքն ալ խոր քունի մէջ էին, և մէկիկ մէկիկ արթնցուցինք, պէտք եղածը կապեցինք, մինչդեռ անոնք ուտելիքն և ծածկոցները կը ժողովէին մթան մէջ, և չորս կապոց ըրին, ամէն մէկն մէկ քրդի

digitised by A.R.A.R.@

համար։ Լուսինն Գարապապի լերանց վրայ եկեր էր, Ալալբիսէն անդին, բայց այնպէս մաշած էր, որ հազիւ մէկ երկու կանգուն հեռուն տեսնելու լոյս կու տար։

Ժամը մէկին ճամբայ ընկանք 13 հոգի, դէպուդիվ խոտաւէտ խոռոչներուն միջէն եղնելու այլ կոհակաց վրայ որք դէպ 'ի մեծ կոնը կը ձգուին, Մտ. Հիւս. Մտ. ուղղութեամբ, իրենց մէջ փակելով շատ մը երկայն և նեղ ցած տեղուանք, որք այնչափ քիչ խոր են՝ որ ձոր չեն կրընար կոչուիլ։ Քուրդք ճամբուն կ'առաջնորդէին. 'ի սկզբան աղէկ առաջ գացինք. Խազախք՝ աղէկ քաջուկ էին, բայց քան զՔուրդս պակաս ուժեղ. քայլերնին լաւագոյն էր քան Զուիցերցի առաջնորդաց։ Բայց քիչ ատենէն դժբաղդաբար խաբուեցանք. 25 վայրկեան վերջը սեպաձև կտուր մը եկան, և անոր գագաթը խոտերու վրայ փըռուեցան հանգչելու։ Մենք ալ այնպէս ըրինք. կէս մղոն ալ առաջ երթալէն ետև՝ դարձեալ փռուեցանք 'ի գետին. այս անգամ հարկ եղաւ որ նշան տանք իրենց ճամբայ եկնելու։ Քառորդ ժամ մը չանցած՝ նորէն նստան 'ի գետին. և այսպէս ըրին բոլոր ճամբուն մէջ։ Ամէն տան վայրկեան քալելու (վասն զի գետինն դեռ այնչափ զառ 'ի վեր ցցուած չէր՝ որ ճանկրտել ըսէի) եօթն կամ ութ վայրկեան հանգիստ կու դար, ծուխ քաշել և զրոյց ընել։ Անկարելի էր որ մեր չարժելովն իրենք ալ չարժէին, կամ ինչուան որ հանգիստ չառնուին՝ մենք առաջ երթայինք. և որչափ նուազ լուսով կրընայի նշմարել, անոնք իրարու կը նայէին և երբեմն երբեմն կը ծիծաղէին. բայց ինչուան որ չուզէին՝ չէին չարժիր։ Ճարերնիս կըտրեցաւ. մինակ առաջ երթալ չէր ըլար. չէինք ալ կրընար բաղատրել թէ ամեն մէկ վայրկեան անդին էր. վասն զի մեզի թարգման եղողն մնացեր էր 'ի Պարտարալագ, և մենք ամենևին չէինք կրընար խօսակցել մեր ընկերաց հետ։ Մարդ ուզեր ալ՝ չէր կրընար նեղանալ. վասն զի անոնք աղէկ բարքով ուրախ զուարթ էին. եթէ զիրենք խթէինք կամ թևերնէն քաշէինք կամ կռնակնին զարնէինք, անոնք կարծէին թէ մենք կատակ կ'ընենք, և նստած կը շաղակրատէին։ Երբոր բաւական լոյս եղաւ ժամացոյց դիտելու և ժամուց անցնիլն ու մեր ընկերաց անշարժութիւնը տեսնելու, նորէն յուսահատեցանք լերան գագաթը ելնելու յաղողութենէն։

Մթութեան մէջ անցած տեղերնուս բնութեան վրայոք բան չեմ կրընար ըսել, բայց այս միայն որ բոլորովին անջրդի էր. և թէ, կարծեմ որ խոտաւէտ գոգէ մը անցանք իբր 9000 ոտք բարձր ծոլու երեսէն, անոնց ձգնարան կոչած տեղն. և կարծեմ խոտքոյ զօրապետին մէտէորական քննութեանց տեղն է, 1850 տարւոյն յուլիս և օգոստոս ամսոց մէջ։ Ինքն ինծի ըսեր էր թէ հոն աղբիւր մը կայ. բայց կամ հիմայ ցամքած էր, կամ մենք առանց տեսնելու անցանք։ Շատ կողմեր արօտներ կային, բայց կենդանի չտեսանք. անչուշտ աւելի ցած գաւակաց վրայ իջեր էին։ Մեր տեսած և զուարճացած բանն էր երկրնքին երեսն։ Ժամն երեքին յանկարծ Մարաց լեռներուն կռնակէն երևցաւ արուսեակ աստղն, այնպիսի պայծառ լոյս մը սփռելով՝ որ մեր հիւսիսային կողմերու աստղ մ'ալ չի ձգեր, և գրեթէ լուսնի լուսէն աւելի էր։ Ժամ մը ետև սկսաւ նուազիլ, երբ երկնից աբևելեան կողմը սկսաւ առաջին դեղնութիւն լուսոյ, և նախ մեր վերևի ժայռոտ կտորքն, յետոյ փոքր Մասիս՝ հրակայակերպ ստուերմ մը ձգելով ետևէն, յետոյ Երասխէն անդին լերանց երկար շարք մը, սկսան յերևան գալ, մինչդեռ վարը Երասխայ ընդարձակ դաշտն դեռ շուքի և մթան մէջ էր։ Մէկիկ մէկիկ աստղերն սկսան կորուիլ՝ քանի որ դեղին լոյսն կը փոխուէր 'ի խոր կարմիր, և հեղեղի պէս կը սփռէր վարգածդի արշալոյսը՝ հորիզոնէն մինչև 'ի զենիթ։ Յուրտ և ստուերամած կեցած էին ձիւնք մեծ կոնին վրայ, ինչուան որ իրենց ամենէն բարձր կատա-

digitised by A.R.A.R.@

րին վրայ, մեզմէ 6000 ոտք վեր՝ յան-
կարծ վարդագոյն նշոյլ մը ծագեց. և
կամաց կամաց սկսաւ տարածուիլ ա-
րևելեան երեսէն վար, ու անմիջապէս
մեր վերեւը եղող ժայռերը կարմրա-
ցուց։ Ինկէ ետև արևն ալ ծագեցաւ, և
մէկէն 'ի մէկ երասխայ դաշտն և լերան
վայրենի կոհակաց գագաթն, որոց վրայ
կ'ելնէինք, ամենապայծառ լուսով լը-
ցուեցան։

Դամն գրեթէ ճիշդ վեց էր. աւելի
յայտնութեամբ սկսանք յառաջ երթալ,
վասն զի ճամբանիս որոշ կը տեսնէինք.
խոզախք սկսան աւելի թուլանալ, առ-
ջինէն պէս ստէպ կանգ առնելով և ա-
ւելի քիչ զուարթութեամբ խօսելով.
վասն զի շատ չէին ախորժեր այն ցը-
ցուած խորտուբորտ լաւայի կոհակնե-
րէն, որոց գլխէն կամ քովէն պէտք էր
անցնիլ։ Ես իսկ կ'ուզէի քիչ մը դան-
դաղիլ, վասն զի այն խառուչից մէջ ուր
քիչ մը՝ հող կ'երևար, քանի մը հե-
տաքննական բոյսք կը դտուէին, որոց
նմանութիւնն կամ տարբերութիւնն ա-
ռանձնան ելրոպիոյ ալպեան բոյսերէն՝
արժանի էր քննութեան. բայց ժամա-
նակն հաղիւ քանի մը հատը թողուց
քննել. կը յուսայի որ ետ դառնալու
աւելի ատեն գտնեմ, բայց այս չյաջո-
ղեցաւ։ Երբ դժարութեամբ կ'երթա-
յինք կոհակի մը վրայէն նեղ քարաձո-
րի մը եզերքէն, որ սահուն քարերով
լցուած էր, յանկարծ գրգռոց մէկն
անգղի պէս վար փրթաւ բարձրէն 'ի
խոր յատակն, և սկսաւ քարանց մէջ
բան մը պրպլտել և բնռռել. մէկ եր-
կու վայրկենէն կանչեց ընկերներուն՝
ոչք իր քովը թափեցան. այրիւր մը
դեր էր, և գետինը փորելով աւազա-
նիկ մը ձեւացուցեր էր, ուրկից մինչ
ալ կրցանք քիչ մը խմել։ Հոս իրաւացի
պատճառ մը կար ուշանալու. ամենքն
ալ ծարաւած էին և պիտի խմէին, ոչ
միայն ջուրը, որ ինչպէս վերջն իմա-
ցանք՝ 700 ոտք բարձր ձեան նստոցէ
մը կը կաթկլթէր այս քարերուս մէջ,
այլ և ջրին հետ խառնած ցրի մը, զոր
ընկերս բերած էր շիշով, և թէպէտ
ջրախառն էր՝ բայց խաղախք մեծ յա-
ժարութեամբ զայն վայրկեին։ Երբոր
նորէն վեր կանգնեցինք զանոնք առաջ
երթալու, սկսան դժուարիլ և հեռա-
նալ. քիչ ատենէն երկուք՝ կամ երեքն
նստան, յայտնապէս իմացընելով որ ալ
առաջ երթալ չեն ուզեր։ Այն միջոցին
հասած էինք պզտիկ ձեան նստոցի մը,
ուսկից՝ հիմայ զօրացած արևն ջրոյ ա-
ռուակ մը կը հանէր, որոյ քով ժայռից
վրայ դադրեցանք նախաճաշիկ մ'ընե-
լու. երկու խաղախ և չորս ֆուրդերն
ճնացեր էին հետերնիս, մէկալներն քիչ
մը վարը փռուած էին գետնին վրայ։
Ձէնինք գիտեր թէ ինչ հրաման տրուած
էր անոնց, կամ թէ ուրիշ բան ըսուած
էր իրենց բաց 'ի զմեզ բերելէն ինչուան
ուր որ կրնան, և տեսնեն որ ֆուր-
դերն մեր բեռները կրեն, և նորէն զմեզ
ետ դարձընեն. այս վերջի բանս կարե-
ւոր էր ձեաֆարի խիղճը հանդարտե-
ցընելու համար։ Վերջապէս համարե-
ցանք որ եթէ իրենց ճնայ՝ հօն մեզի
պիտի սպասեն. օրն ալ առաջ կ'եր-
թար, պէտք չէր ժամանակ կորուսա-
նել զիրենք ստիպելով հետերնիս գա-
լու։

Ուռանց տնտնալու որոշեցի որ առ-
նում ինձ հարկաւոր եղած պաշարը և
ինքն իրենս ճամբայ ելնեմ. ընկերս որ
աւելի ծանր բեռ ունէր և օգնականի
կարօտ էր՝ չուզեց աւելի առաջ երթալ,
այլ հօն սպասել ինծի գլխերուան մօտ։
Խնամով նշանակեցինք տեղւոյն դիրքը,
փոքրիկ ձիւնանիստը, խորաձորին գը-
լուխն որ կարմրուկ քարերով և խիճ-
երով ծածկուած էր, և աւելի բարձր՝
Մեծ Մասեաց կոնին երեսէն դուրս ցը-
ցուած սար մը, կամ՝ աւելի ազէկ ըսեմ՝
սև ժայռի ծանկը մը, զոր խաղախքն
վանք կ'անուանէին, և որ կարծեմ
նոյն երևակայեալ ձևին նմանութեան
համար՝ թաթարերէն կոչուի Դաշ գի-
լիսէ, քարէ եկեղեցի. անշուշտ հրաբղ-
խի զօրութեամբ պոռթկացած հին կոն
մ'է իբր 13000 ոտք բարձրութեամբ,
և ատուգիւ այն երկայն կոհակին վեր-
ջին ծայրն է որուն ուղղութեամբ կ'եր-

digitised by A.R.A.R.@

թայինք. ուսկից թերևս լաւայի վաղուանք մ՚ալ ըլլայ, կամ պատառուած քի մը չրթունք ըլլայ։ Հօս մինք իրը 12000 ոտք բարձրութեան վրայ էինք. ամեն բան մեզմէ վար կ՚երևար, բաց ի փոքր Մասիսէն որ մէկալ կողմն էր, և հրաշալի կոնէն (Մեծ Մասեաց) որ մեր նստած տեղէն կը սկսէր կանգնիլ, իր պսպղուն ձիւներն և լաւայի սև խոժոռ սրձէն ժայռերն ցուցընելով անամպ կապոյտ ծովանման պայծառութեան մէջ։ Թէ փորձուիլն և թէ վախ կը բերէր. բայց որովհետև աւելի մօտիկ բոլորակ բարձունք կը ծածկէին զայն՝ չեմ կրնար ըսել թէ որքան դիժուարին կ՚ըլլար վերելքն։ Իսկ մեր ընկերներէն ամենեին տեղեկութիւն մը չէինք կարենար առնուլ. Քուրդք իրենց հօտից գոած արօտէն բարձր տեղ չեն ելներ. և այս կողմն՝ ապահովապէս մեր եղած տեղը արօտ չի գտուիր։ Ասկէ զատ մնոտիապաչտ յարգանք մ՚ունին այս լերան, քիչ պակաս քան զՀայս. այս տարբերութեամբ՝ որ Հայք հաւատով կարծեն թէ հրեշտակք կը պահպանեն զայն, իսկ Քուրդք հանդիսական կայանք մը կը համարին դիւաց և քաջայց (ձիոն) [1], որք պատրաստ են վրէժ խնդրելու իրենց դիւերային հանդիսատը չփոթողներէն. անոր համար հովիւք որչափ որ կարելի է կը փախչին բարձր տեղունքէ։...

Ժամն ութին կոճկեցի լաթէ կօշիկներս. գրպանս դրի քիչ մը չոր հաց, լեմոն մը, պղտի շիշ մը պաղ թէյի, չորս հատ պնդախաշ հաւկիթ, քիչ մ՚ալ խմորեղէն [1], մեաս բարով ըսի բարեկամիս, և ճամբայ ընկայ։ Շատ զարմացանք երբ տեսանք որ երկու խաղախքն և մէկ Քուրդն հետս եկան, կամ մեր նշանացի քաղաքական ձևերէն յորդորուած, կամ՝ պարզ հետաքրքրութեամբ տեսնելու թէ ինչ պիտ՚ընեմ։ Սառնահատ կացինս շատ կը զուարճացընէր խաղախները։ Զախակողմեան կոհակին վրայ ճանկռտելով և դէպ՚ի անոր գագաթը քիչ մը ճամբայ բանալէս վերջը, դարձայ ընդարձակ խորձորի մը կիսաբոլոր գլխուն, որուն մէջ տեղը քիչ մը վար ձեան նստոց մը կար, սահուն կոտրտած քարերով և աւազով ծածկուած երկայն գաւակի մը վրայ։ Այն գաւակն կամ կրունկն շատ յօդնեցուց, վասն զի հաստատուն կոխելու տեղ չունէր. և երբ միւս կողմը հասայ՝ սաստիկ ուժէ ընկած և ընչահատեր էի, որովհետև կէս գիշերուընէ՚ի վեր ոտքի վրայ էի, և ալ անկարելի կ՚երևար յառաջել։ Բայց այս դիմացի կողմը հաստատուն քարաժայռի հասայ՝ ուր աւելի դիւրին էր քայլել. և քիչ ատենէն չորս կողմէն սկսան առուակներ կաթկըթիլ վերեն եղած ձիւնապատ քարուտ գաւակներէն։ Փոքր Մասեաց գագաթն՝ որ ետքի երկու ժամն միակերպ նոյն բարձրութեան մէջ կ՚երևար՝ հիմայ սկսաւ յածնալ. և ժամն տասնին կը հասնի վար նայիլ անոր փոքր տափակ գլխուն վրայ, որ մեծամեծ ժայռի կտորներով ցցուած էր, բայց հրաբուղխ բաժակի նշան չէր ցուցներ։ Նոյն կոհակին վրայէն աւելի վեր ելնելով՝ 13000 ոտք բարձրութեան տեղ մը՝ տեսայ չարժուն քարանց վրայ փայտի մը կտոր, չորս ոտք երկայն հինգ մատ լայն, անշուշտ գործիով մը կտրած, բայց այնչափ հեռու ծառոց սահմանէն՝ որ չէր կրնար անոնց բնական կտոր մ՚ըլլալ. այնպէս ուրախութիւն մը ցուցի անոր վրայ՝ որ խաղախքը և Քուրդն զարմացան. առի և իրենց ցուցընելով քանի մը անգամ

1 Հայ քրիստոնէից այս հաւատքն մեզ անծանօթ էր. իսկ երենց հեթանոս հարց հաւատքն եթէ ծանօթ ըլլար Հեղինէին՝ պիտի յիշէր որ նախ անոնք Քաջաց գագաթ համարեցան Մասեաց ամպի ձորերը, և պիտի կրկնէր անոնց Վիպասանից Թելադրութիւնը՝ ի բերան Բ Արտաշիսի յանիծանէն զորդին Արտաւազդ. եթէ,

« Դու յորս հեծցիս յԱգատ՝ ի վեր՝ ի Մասիս,
Զքեզ կալցին Քաջք, տարցին յԱգատ՝ ի վեր՝ ի Մասիս.
Անդ կացցես, և զայն մի տեսցես. »

և ըստ անէծից հօրն՝ Արտաւազդայ բռնուիլ ու կապուիլ ձեռն հօն քարայրի մը մէջ։ Ցայսմաւուրք ալ յիշեն զայս, Նեղար կոչելով զԱրտաւազդ։

1 Lozenge.

digitised by A.R.A.R.@

Նոյ, Նոյ, անունը կրկնեցի։ Խաղախն երեսը ծռմռեց ժպտելու պէս. բայց բնութեամբ այնպէս զուարթ էր՝ որ կարծեմ ինչ ալ ըսէի նոյնպէս պիտի ժպտէր, և չեմ կարծեր թէ իմացաւ միտքս և ճանչցաւ փայտը իբր կտոր մը Նոյի տապանին։ Թէ արդարև ասիկայ այն կոփար [1] փայտերէն էր՝ որով տապանն շինուեցաւ, չեմ կրնար ըսել, բայց կ'ուզեմ քննել տալ հետաքրքրողաց այն կտորը՝ զոր սառնակայծինովս կտրեցի և հետս բերի։ Ինչ ալ ըլլայ՝ դժար է ապացուցանել թէ կոփար փայտէ չէ. և եթէ Արարատայ վրայ տեղ մը տապանին կտորուանք կան, ինչպէս անտարակոյս կ'երևի այս կողմերուս բնակչաց, այս տեղս աւելի յարմար է զայն գտնելու քան լերան գագաթը. վասն զի այնքան դարուց միջոց ձեան նստոցաց շարժմունքն զանոնք վար սահեցուցած պիտի ըլլան. այն դիպուածին յարմար կու գայ այս փայտս ալ. և եթէ տապանին նշխար մը բնտռուի՝ շատ զօրաւոր է այն դէպքը։... Կ'ընդունիմ թէ ուրիշ մեկնութիւն մ'ալ կըրնայ տրուիլ այս փայտի կտորին այսպիսի ամնչի բարձրութեան մը վրայ գտնուելուն. բայց որովհետև ոչ ոք կը ստիպուի իր նշխարին վրայ տարակուսիլ, և Հայոց եկեղեցին ալ այս սովորութիւնը չունի, չեմ ուզեր իմ ընթերցողաց միտքը պղտորել, կամ՝ տեղիք տալ այս դարուս պատճառախնդիր բերմանը, այս բանս առաջարկելով։

Վասնզի՝ որ մեր ելած կոհակին աւելի վերի կողմն գահավէժ ըլլայ, դէպ 'ի ձախ կողմը դարձայ, և երկայն ու նեղ ձիւնանիստ գաւակէ մը անցայ՝ որ այս կոհակին և ուրիշ շարք մը ժայռից մէկնուղէն դէպ յարևմուտք կ'իջնէր. գետինն հաստատուն էր, և բաւական խորտուբորտ՝ ձեան մէջ կոխելու տեղ բանալու համար, թէ և հարկաւոր չէր, բայց սառնակայծինը բանեցուցի։ Ինձի հետ եկող Խաղախն (վասն զի իր ընկերն քիչ մ'առաջ դէպ 'ի աջ կողմէն գայեր էր և ալ չերևցաւ), իմ բարեկամիս ալ պէտն ցուսն հետը բերեր էր, և բաւական ճարտարութեամբ կը գործածէր. ճարպիկ շարժմամբ ետևէս կու գար. բայց Բուրգն ձեան ծայրը կեցաւ, և սկսաւ դժուարիլ շարժմամբիկ, նման անոր որ բաղանեաց տախտակին վրայ կ'երերայ. Խաղախին արհամարհական ձայներն բաւական չեղան զինքը դրդռելու՝ որ համարձակի գալ այս լպրծուած տեղը։ Իսկ մենք որ անդին անցանք՝ մեր վերևը կանգնած կոտրած ժայռը կը դիտեինք. բոլորովին վտանգաւոր չէր երևար, բայց բաւական զգուշալի՝ վրայէն երթալու կամ անցնելու։ Քիչ մը կանգ առնելէս վերջը՝ յառը ելայ, Խաղախին ուսը զարկի և ժայռը ցուցի։ Նա աչքերովը չափեց զայն և գլուխը շարժեց. իսկ ես յուսադրական շարժմունքներով կռնակը զարկի և իբրև քաջելով ուզեցի հետս տանիլ. նա նորէն ժայռերուն նայեցաւ, ցըցուց զանունը, ծնկուքները չփեց, կոչիկներուն տակը ցուցուց, որ յիրաւի աւրուեր էին լաւ-քարերէն, և նորէն ծանր կերպով մը գլուխը շարժեց. ասիկայ վճռողական նշան մ'էր. պէտք եղաւ որ ես ալ նշանացի հակցընեմ իրեն՝ թէ լաւ կ'ըլլայ որ դառնայ երթայ իմ բարեկամիս դադրած տեղը, քան թէ մինակ հոն մնայ. և թէ՝ կը յուսամ որ իրիկունը զինքը դտնեմ անոր քով։ Ցեսայ սիրով մնաս բարով ըրի, և դարձայ դէպ 'ի ժայռերը։

Ժամն տասն ու կէս էր. բարձրութիւնն 13600 ոտք. փոքրն Մասիս իբրև 1000 ոտք աչքէս վար կ'երևէր։... Օդն դեռ շատ ալէկ էր, թէ և ամպեր կը դիպուէին լերան գագաթը, և այնչափ քիչ ձիւն կ'երևնար այս կողմն, որ մինակ լեռ եղնոյի սովորական վտանգի վախ չկար, և կըրնար մէկն առանց ըն-

1 Հեղինակն՝ ըստ երրայական բնագրի Ս. Գրքոյց՝ կոփար փայտ կ'անուանէ տապանին փայտը, որ է կիպարի կամ Նոռի. մեր Թարգմանութիւնն ըստ Եօթանասնից ԷրեՎոսի կ'ըսէ. Լաստիացն՝ յղկեալ, այսինքն տաշած կոկած, և ոմանք ալ (ինչպէս Ս. Հերոնիմոս) կպուռաբերեալ կ'ըսեն։

կերի ալ ճանկռտելով ելնել։ Այսպիսի խորհրդածութիւն քաջալերուած՝ սկսայ դիմացի արաքիտեան քարաժեռաց վերայ երթալ. բայց անանկ դժուարակոխ գտայ զանոնք՝ որ պէտք եղաւ թողուլ ու դառնալ դէպ 'ի ձախ, յարևմուտս կողմն. մոայ մէկ երկայն շիտակ գաւակի մը վրայ հրաբղխի քարերով ձևացած, արաքիտի, պաղալտի և նմանեաց, և այնպէս սուր անկիւն մը ձևացընելով (կարծեմ 33 աստիճանի), որ քարերն շատ հեղ ինքնին կը դլորէին, և ձեռաց ու ոտից կը հանդիպէին. այնպէս որ որչափ որ վեր ելնէի դարձեալ ծոյնչափ վար կը սահէի։ Գրեթէ երկու ժամ անցաւ այս կոսոր մը կրունկին վերայ ելնելու, ոչ այնքան տեղոյն բնական դժուարութենէն՝ որքան իմ յոգնութենէս և ընչահատութենէս, որ անշուշտ օդուն բարակութեան պատճառաւ էր։ Այսպիսի նեղութիւն մը կրած չըլլալով ուրիշ անգամ, և ոչ իսկ վարդալերան [1] գագաթը, կարծեցի թէ այս զգացմունքս, որ սկսաւ քարանց առաջին գաւակն ելնելուս ատեն միայն, 12300 ոտք բարձրութեան, պատճառած ըլլայ անվարժութենէ և քնահատութենէ. հիմայ որ ամէն երկու քայլի պէտք էր կենալ և շունչ առնուլ՝ յայտ է որ օդուն բարակութիւնն պիտի ըլլար գլխաւոր պատճառ, թէպէտ և ոչ գլխոյ ցաւ կը զգայի, ոչ ստամոքի խառնուք, ոչ քթէն և ականջէ արիւն, և ոչ ուրիշ ծանօթի նշաններ լերանց տկարութեան։ Բայց զարմանալի է՝ որ աւելի վեր ելնելուս ատեն տկարութիւնս ալ չաւելցաւ. մանաւանդ թէ 17000 ոտք ելած ատենս աւելի հանգիստ էի քան 13000ին։ Ինչու՞ այս եղաւ, կամ ինչու՞ Արարատայ վրայ աւելի ցած տեղ այսպէս զգացի, չեմ գիտեր. ինծի անսովոր և քննելու արժանի բան մը կ'երևի։ Ալպեանց մէջ, կ'ըսեն, թէ կան լեռներ, ինչպէս Սպիտակ լեռն, ուր աւելի յաճախ այսպիսի զգացմունք կ'ըլլան քան ուրիշ անոնց հաւասար լերանց վրայ. անշուշտ մարդ մարդէ տարբերութիւն ունի, և նոյն իսկ մէկ մարդն ալ միշտ նոյն ընդունակութիւնը չունենար. սակայն թուի թէ լերանց մէջ ալ տարբերութիւններ պիտի ըլլան՝ քննութեան արժանի։

Հիմայ խնդիրն այս էր, թէ արդեօք այսպէս կապարի նման ծանրացեալ ծունկերով, և նաւակի մէջ ընկած ձկան պէս հևհևալով պիտի կարենայի առաջ երթալ։ Ուրիշ դժարութիւն մ'ալ կար՝ ամպերէն, որ այս ատեն հաստատ պատեր էին լերան գագաթէն բաւական վար, ինչպէս որ սովորաբար ամէն օր այս ժամերուս կ'ընեն, և կրնային արգիլել զիս գագաթան ճամբէն, կամ մոլորցընելով՝ ճամբան երկարել և ուշած նպատակէս վրիպեցընել։ Այն առատուն գագաթը չէի տեսած, և ստիպուած էի գուշակելու անոր գիրքը՝ այն կոհակներէն՝ որ կոնին երեսն 'ի վեր ձգուած են. (հօս պէտք է յիշեցընեմ որ թէպէտ շատ անգամ կոն ըսի այս լերանս, բայց աւելի գմբեթաձև է քան կոնաձև, և այնչափ մեծ է՝ որ վրան ճանկռտելու ատեն՝ բնաւ կսնի կերպարանք չերևար)։ Այս մտածութեամբ նստայ, և հակիրճ մը ուսելով՝ լերան դիրքը դիտեցի. միոքս յայտ հաստատեցի, որ եթէ անյաղող տեղ մը ելլայ ճամբաս, կամ ժամն իրեն հասնի, լաւ է մանաւանդ թէ պէտք է ետ դառնալ, եթէ լերան գագաթն մօտիկ չէ։ Անյաղող տեղ ըսածս՝ շատ վտանգաւոր բան է մինակ եղողին, մանաւանդ իջնելու ատեն. ոչ այնչափ ընկերի օգնութիւն մը չունենալուդ համար, որչափ ղեղաց վրայ եղած ազդեցութեանն համար՝ որ կը ստիպեն լեռնագնացը անտեղ անտառակոյս առաջ երթալ։ Այս առթիւ՝ ամենէն կարևոր բան ժամանակն էր, վասն զի պէտք էր որ վարը ճամբարի տեղը հասնէի ժամը վեցին, վասն զի անկէ ետև բաւական լոյս չէր ըլլար քալելու համար. և անոյշ ու անծածկոյթ դիշեր մը նաև 12000 ոտք բարձ-

1 Մեդլ Ռոզա ըստ Իտալաց, Սպիտակ լեռնէն (Mont Blanc) վերը Ալպեայց ամենէն բարձր լեռն է, 4636 մեդր։

digitised by A.R.A.R.@

ռութեն վրայ՝ շատ անհաճոյ հետեւանք-ներ կրնայ բերել։ Այս մտածութենէն այս հաւանութիւնս գտայ, որ՝ որովհետեւ թոքերս ալ սրունքս ալ սաստիկ յոգնած են, անկարող տեղն ալ, ժամն իրէնն ալ ինծի հաճոյ պիտի ըլլայ։

Այս գժուարատանջ քարէ գաւակին վերի ծայրն կապած էր գեղեցիկ սև ժայռի մը, ուակից կախուած էին պապղունսառի պաղակներ 200 ոտք երկայնութեամբ, որ ստուգիւ սառած ջրվէժներ էին, ձիւնապատ գաւակի մը վրայ հաւած ձիւներէ պատճառած։ Հոն հասնելէս առաջ այնպէս սաստիկ յոգնած էի այն սահուն քարերէն՝ որոց վրայ ուրիշ կերպով առաջ երթալ չէր ըլլար, բայց ձեռքով ճանկռտելով և սառնակացինով, որ պէտք եղաւ գառնալ ետեւի դէպ՝ ի ձախ կողմը, և երթալ ուրիշ ժայռէ կողի մը վրայ որ լաւագի ցցուած կուտակներով ձևացած էր. ոբուն հեռադոյն արևմտեան կողմի քամակն շատ կոտրտած ըլլալով՝ կարելի կ'երևնար այն ընկած քարերուն վրայէն ճամբայ բանալ։ Հօս մէկ մեծ տեսարան մը բացուեցաւ, թերևս մեծագոյնն այս լերան վրայ. ոտիցս ներքև կար խորունկ, նեղ և անանցանելի խոռոչ մը, տեսակ մը փողանցք (couloir), որուն յատակը՝ ուր տեղ որ շատ գառ՝ ի վայր չէր՝ ձիւն նստած էր. անկէ անդին՝ շարք մը կարմիր, խոժոռ ու ահաւոր աշտարակաձև ժայռից ուղղակի կ'ամբառնային դէպ՝ ի գագաթն, որոց վերին ծայրն ամպոց մէջ կորսուած էր, և երբեմն ասոնց փարատելուն ատեն՝ հեռուէն շատ հեռու բարձրէն կ'երևէր ամպութիւն մը ձեռնց. եթէ ֆրդաց մէկն ինչուան հօս եկած ըլլար՝ անշուշտ գոչեց պալատ պիտի կարծէր զայն։ Անշուշտ այս խոռոչս այն հին հրաբղխի պատառուածքներէն մէկն է՝ որոցմով լեռն կցուած է, և որոնցմէ մեծ մասն լաւայից վայրած է։ Ուրիշ շատ հրաբղխային երկիրներ ալ կը տեսնուի այս երևոյթս. օրինակի համար յիսպանտա զարշուրելի պայթմունք և պոռթկմունք եղած են ասոր նման ճեղքուածքներէն (որ հոն gjás կ'ըսուին) լերան կողերէն կամ նաև ստորոտն ալ բացուած։ Այս յատուկ պատառուածքն որ դէպ՝ ի Հիւս. Մտ. և Հար. Եռք կը դառնայ, լեռնաշանգուածին առանցքից միջոցն է, ընդ մէջ ֆիփ-դէօլի հրաբղխի բաժակաց՝ ի Հիւս. Մտ. և փոքր Մասեաց՝ ի Հար. Եւ. և կը ցուցընէ այն գիծը՝ որոյ վրայ աւելի սաստկութեամբ ներգործած է հրաբղխային զօրութիւնն։ Այս գիծը բռնելով դէպ՝ ի կոնին ստորոտը՝ կրնայի տեսնել զնոյն՝ երկրնցած փոքրիկ կոներու և բաժակաց շարքով մը՝ ի քամակ այն կոհակին՝ որ Մեծ ու Փոքր Մասիսները կը կապակցէ։ Այս բաժակներէն ոմանք, — որոց ուղղակի մէջը նայեցայ այս կէտէս, — այնպէս ամբողջ մնացեր էին, որ կարծես թէ իրենց կրակը նոր բռնած էր. ամեն աւազանաձև ծակի շրթունքը շրջապատած էին մանրաշարս սև ժայռեր. քովերնին ալ կոյտ կոյտ մխրի և խանձի (scorie)։ Մէկ երկուքին յատակն ալ ժողոված ջուր կար կանաչ և բորբոսեալ ճահիճ դարձած։

Զգիտնալով թէ ինչուան ուր անցնելի կ'ըլլայ այն կոհակն որոյ վրայ կ'երթայի, շատ հեղ կանգ կ'առնուի դիտելու վերի ժայռերը, և քարերով պղտի կոյտեր դիզելով՝ որ ճամբուս նշան ըլլան. այս բանս ոչ միայն ժամանակ կորուսնել տուաւ, հապա նաև ամբողջ ժամեր այնպէս միտքս բռներ էր՝ որ հաղիւ կը նայէի առաջս բացուած աքանչելի տեսարանաց վրայ, և աւելի քիչ կը զգայի անոնց վսեմական մեծութիւնը՝ քան ինչ որ աւելի նուազ նշանաւոր լերանց վրայ։ Միայնութիւնն շատ բարձր տեղերու վրայ կամ վսեմակերպ քարաժեռից և անտառաց մէջ, սովորաբար շատ խոր տպաւորութիւն կ'ընէ մեր զգացմանց՝ տխրութեան կամ ուրախութեան. և շատ անգամ երկուքն ալ մէկտեղ, ուրախութեան և տխրութեան. հօս նկատող զգացմանց ազդմունքն այնքան զօրաւոր էր՝ որ մանաւոր երևակայութիւն կամ յուզմունք մը չէր պատճառեր։ Երբ մար-

digitised by A.R.A.R.@

դուռ միայն սաստիկ զբաղած է նոյն վայրկենի գործոյն՝ երևակայութիւնն կը դադրի։ Այս միջոց ժամանակին ուրիշ բան չէի կրնար ընել՝ բայց ժայռերը դիտել ճամբայ գտնելու համար, ժամացոյցս նայիլ, այժմ նորոգել ստէպ ստէպ քանի մը պատառ բան ուտելով. և չանալ միտք պահել թէ սա քարաժայռն կամ սա գաւակին կտորն ինչ ձևով պիտի երևնան երբ վար իջնելու ըլլամ՝'ի դարձիս։

Աւելի դէպ՝'ի արևմտեան հարաւ երթալով այն ժայռուտ կողին վրայ և վերջապէս անոր գլուխը հասնելով գրտայ գիս անդունդի մը եղերը, որ աւելի առաջ երթալ չէր թողուր։ Այս անդունդէն մինչև՝'ի գագաթ լերինն, կամ ուր որ գագաթն պիտի ըլլար, — վասն զի շատ ամպերով ծածկուած էր, — հաղիւ 1000 ոտք մը բարձրութեան պիտի ըլլար. բաղբաղդաբար ամպերն իրաւցնէ ամպ էին և ոչ տարածեալ մառախուղ մը, որով քանի որ անոնց մէջ մը տած չէի՝ չորս դին պայծառ կը տեսնէի։

Հիմայ երկու ճամբայ կար ինձի. մէկն՝ որ հասանօրէն լաւագոյնն էր, ալակողմէն երթալն էր, ցած ժայռերէն դէպ՝'ի գագաթն այն երկայն քարէ գաւակին՝ զոր թողեր էի, և անկէ անցնիլ աւելի բարձր ժայռի գաւակաց կամ քիչ կորաձև ձիւնապատ կողմանց՝ որ դէպ՝'ի գագաթն կը հանէին։ Մէկ այլն էր քիչ մը յետ դառնալ և իջնել՝'ի ձախակողմն ընդարձակ ձեան աւազանի մը մէջ որ գագաթան հարաւային արևելեան կողմը կ'ընկնար, և որուն հիւսիս-արևմտեան զառիվերակն կը ձևացընէր բուն գագաթին կողմը։ Այս զառիվերակս յարմար տեղ մը կ'երևէր պատառուածոց, թէպէտ չեմ յիշեր որ անանկ բան մը տեսած ըլլամ, և բաւական ցցուած կ'երևար՝ կոխելու տեղ բանալու համար. ձեան սկզիին (névé) շատ յարմար թուէր ընկերութեամբ քալելու համար, բայց ոչ միայնակ մարդու մը համար, որ եթէ սահելու ըլլար՝ շատ դժուարաւ պիտի կարենար բռնել կենալ։ Բաղդով՝ այն աւազանին արևելեան կողմը՝ գահավիժին ներքև ցցուած տեղայ մը վրայ՝ ուր կեցեր էի, թէ և նեղ ձիւնանամով մը զատուած, կար մէկ փխրած քարերով սեպացեալ գաւակ մը, բոլորովին ձիւնէ աղատ, և կը բարձրանար կէտ մը՝ որ ամպերով ծածկուած էր, բայց ճամբան արգելող ժայռ մը չէր կարծուէր հոն։ Ստիպուած որոշելու՝ գժուարին բայց գրեթէ ապահովապէս անցանելի ճամբու մը, և ուրիշ հաւանօրէն դիւրին՝ բայց աւելի հաւանօրէն ալ անանցանելի ճամբու մը մէջ, յայտ է թէ չէի կրնար ուշանալ զառաջինն ընտրելու։ Փիչ մը հեռանալով անդունդին եղերքէն, և ճանկռտելով լարծուն սառնագաւակի մը վրայ, ուր բարեբաղդաբար ժայռերու մէջ բռնելու տեղ կար, նախասացեալ մեծ ձեան աւազանին մէջ գնացի, ճիշդ այն տեղը՝ ուր վերոյիշեալ խոռոչն կամ պատառուածն կ'իջնայ անկից և փխրեալ քարանց կը հասնի։ Ատոնց կորութեան անկիւնն (38 կամ 43 աստիճանի) դեռ բաւական դիւրին համարուէին, եթէ հաստատուն ըլլային, բայց այնպէս կոտրրտած էին [1], որ ոչ ձեռք և ոչ ոտք բռնելու տեղ կրնար գտնուիլ. ուստի սահեցայ և գլորեցայ խեղճ կերպով, ալ բաւական ջղաց ոյժ չունենալով դէմ դնելու։ Այս ժայռերուս մէջ սաստիկ ծծումբի հոտ մ'առի, նման հրանօթոց վառօդին երբ նոր կ'արձակուին, և տեսայ ալ ճերմակ ու կարմրադեղին ժանդի նշաններ գետնին երեսը, որոնց նման տեսեր էի՝'ի Հեքլա և Իսլանտայի կէս մարած թրապլա հրաբղխին վրայ։ Անշուշտ այս հրաբղխի նշան է, ըսի, և չորս դի կը նայէի՝ պայթման բացուածք մը տեսնելու, կամ գոնէ ոտք չոգի մը՝ որ յայտնէ ստորերկրեայ ծածկուած կրակը. բայց անանկ բան մը չտեսայ։ Աւազանին ձեն հասանել կուտայ թէ ատենօք հրաբղխի ներգործութեանց տեղ մ'եղած ըլլայ. բայց

[1] Այս տեսակ ժայռերս կամ փշրած քարերը Վենետիկեան Ապենայց մէջ croda morta կը կոչուին, այսինքն՝ դեռեւ մեռեալ։

digitised by A.R.A.R.@

հոան և ժանդն, ինչպէս որ քներ էր Ապիս[1], ուսկից տեղեկացայ յետոյ, կը պատճառէր տարբիտ քարանց քայքայմունքէն, որք լի են մանրիկ բիւրեղք երկաթային ծծմբոյ. որ այս բարձրութեանց խոնաւութեան մէջ լուծուելով՝ կ'արձրկեն ծծմբային թթու կաղ սուր հոտով, և զուգելով նոյն ժայռերուն կը-րի և պաղլեղի հետ հանդերձ երկաթային քլորիտով՝ այն կարմիր կամ դեղին ժանդերը կը գոյացրնեն։ Ասոնց և ուրիշ հանքերու կոորներ կային չորս դին, որոց մէջ գտայ գանքարի (Gypsium) կը-տոր մը գեղեցիկ բիւրեղներով, ձեան երեսը գաւաթան մնա։ Ապիս կը կարծէ ալ, որ քիմիական ներդործութիւնք կամ լուծմունք, որ սաստիկ կը ներ-գործեն այս տեղ, պիտի ըլլան պատճառ մը՝ այս ժայռերուն ձիւնէ ազատ ըլլալուն, որ զարմանալի երեոյթ մ'է, երբ մտածենք որ անոնք այնպէս գրեթէ գաւաթան մնա կը գտնուին (17000 ոտք)։ և թէպէտ եպացեալ են, այլ շատ նուազ քան զասանեղէն պարիսպս Ալպեայց և Կովկասու՝ նոյնպիսի դրից մէջ, և աւելի մնա մշտնջենաւոր ձեան սահմանին, որ Արարատայ վրայ 14000 ոտքի կ'ելնէ։ Ել միայն այս քարանց լուծմունքէն տաքութիւն մը կը գոյանայ, այլ նոյն իսկ ծծմբատք կ'ըլլան բազալտծիչք, ինչպէս որ սովորական աղն կ'ըլլայ երբ ցանուի դրան սառնապատ շեմոց վրայ։

Բոլոր այս ժայռէ գաւակին վրայ ելնելուս առեն, (որ այնքան դժուարին եղաւ մինչև գրեթէ չորս անգամ յուսահատեցայ), միակերպ անոր վերին ծայրը կը նայէի՝ տեսնելու թէ արդեօք ժայռի ժանիք կամ ձեան դաշտեր կան. բայց միշտ միգապատ էր այն կէտն՝ ուսկից կարծուէր թէ ձիւնն կը սկսի, և յայտնի չէր՝ թէ այն թեթև ճերմակ վարագուրին ետև ինչ կար ծածկուած։ Չէի կրնար գուշակել ինչ բարձրութեան հասած ըլլալ՝ չորդի նայելով, ինչպէս որ լեռնադնացք կ'ընեն, ուրիշ լերանց գագաթներ դիտելով. վասն զի այս անգամ քանի մը հազար ոտք 'ի վեր էի քան զԹոքրն Մասիս՝ որ ամենէն մեծ տեսանելի գագաթն էր, բայց որչափ վեր ըլլալս չէի խմանար։ Այս ահաւոր բարձրութենէն կ'երևնար նա խորտակեալ կոմոզի մը նման՝ քան թէ ինքնակաց գագաթ մը, 12800 ոտք բարձրութեամբ։ Ամպեր ծածկեր էին մեծ ձիւնաւազանին միւս կողմը, և ալիքներու պէս կը վխտային քաջայն պալատին աշտարակաց ու մահարձանաց չորսդին, որք կանգնած են անոր ստորին յրմանց վրայ։ Վերէն և ձախ կողմէն մառախուղ, շարք մը սև վէից ալ կողմէն ամեն տեսարան խափանող, անանկ միայնութեան և առանձնութեան խոր տրպաւորութիւն մ'ըրին վրաս, որ լուխմացայ լերանց լռութեան ազդած վախը քուրդ հովուաց վրայ։ Գլխուս վերև թանձր կապոյտն փոխուեր էր սաստիկ պայծառ կանաչի մը, արտաքոյ կարգի գոյն մը՝ որ տեսարանին սոսկումը կ'աւելցրնէր։ Ժամ մը միայն կը մնար իմ ետ դառնալու որոշած ատենիս. և երբ կ'աշխատէի ճանկռտելով ժայռից մէկ մէկ մը յալ մէկ մ'ի ձախ դառնալով, ուր որ քիչ մը ոտք հաստատելու տեղ կար, սկսայ տարակուսիլ թէ ժամ մ'ալ վեր ելնելու կրնամ դիմանալ։ Վերջապէս յանկարծ քարաժայռ գաւակին ծայրը հասայ, և ինչուան անոր չիտակ տարածուած ձեան գաւթին ելայ, մտնելով ամպոց մէջ՝ որ բնականապէս ցրտագոյն մակերևութից վրայ կը ցամքին։ Ուժով արևմտեան հով մը կը փչէր, և անշուշտ օդուն չափահառնութիւնն շատ ցած պիտի ըլլար, որովհետև մէկէն 'ի մէկ թանձր սառնապաղ մը պատեց երեսացս վարի կէսը, և չհալեցաւ՝ ինչուան որ կոնին գոգն իջայ՝ չորս ժամ վերջը։ Դժբաղդութեամբ շատ թեթև ալ հագուած էի. այսպիսի առթից համար պատրաստած կրկնապատ վերարկուս՝ Ռուսիոյ երկաթուղոյ մը վրայ գողցուած էր. մէկ հատիկ ճար այս խայթող ցրտու-

1 Հմուտ գերմանացի երկրաբան, որ քառասուն տարիէ վեր Կովկասեան լեռներն ու գեղեցիները կը քննէ։

digitised by A.R.A.R.@

թեան դիմանալու եղաւ պլլբիլը թե-թև վերարկուիս մէջ, կուրծքիս վրայ գարձընելով սպանիական փաթթոց (faja) մը, զոր հարկաւոր ատեն միզս փաթթելու համար բերած էի. անոր պայծառ ծիրանի գոյնն բաւական այ-լանդակ երևոյթ մ'էր այսպէս փաթա-թելով, բայց ուրիշ տեսնող մը չըլլա-լուն համար, երևոյթը բանի մը տեղ համարել չէր արժեր։ Մէկն այնքան թանձր էր հիմայ, որ հազիւ երեսուն կանդուն հեռուն կ'երևար. հինգ կամ վեց վայրկեան ձեան վրայէն առաջ դացի գետնին բարձրանալուն դիրքով որ քիչ քիչ կը բարձրանար, և կարծէի որ դեռ շատ երթալու է. ետ դառնա-լու ճամբաս նշանելու համար՝ առանա-կացիներս ծայրը ետեւէս կակուղ ձեան վրայ կը քաշէի, վասն զի ուրիշ նշան չկար հօն, ամէն դի ամպով պատած էր։ Ու ահա յանկարծ՝ 'ի զարմանս իմ՝ գե-տինն սկսաւ դէպ 'ի հիւսիս վար իջ-նել. կանգ առի. հովի փուչ մը մէկ կողմէն մեզը ցրուեց, իմ եկած կողմիս հակառակ կողմը, և երեցուց երասխայ դաշտը անդրնդային խորութեան մը մէջ։ Արարատայ գագաթը հասեր էի։

Երկու երեք վայրկեան ետեւ ուրիշ հովի շունչ մ'ալ արևմտեան կողմի թանձր մէկը մաքրեց և երեցուց պզտիկ ձիւնա-ձոր մը, և անկէ անդին իբր քառորդ մղոն մը հեռու՝ ուրիշ գագաթ մը՝ գրե-թէ հաւասար բարձրութեամբ իմ կե-ցած տեղոյս։ Ցիշելով ինչ որ մոռցեր էի գալուս ատեն, թէ լեռն երկու գա-գաթ ունի, ինչպէս որ յայտնապէս կ'ե-րևի Յերևանէ և Արալբեխ, վաղեցի ձիւ-նաձորակին սեպ ու կակուղ կողմերէն, հովուն դէմ, այն մէկալ գագաթան դիւրբ-ելանելի կողութեան վրայ, և հասայ կէսօրուընէ ետև ժամն 2. 25ին։ Ասի-կայ էր երկու գագաթանց բարձրա-գոյնն, թէ և ոչ շատ քան զմէկալն, այլ իբրև 30 ոտք միայն, քիչ աւելի պակաս. և կը զարմանամ թէ ինչպէս զօրապետն խոտոքոյ 36 մեզը բարձր կը համարի զսա. (Գ. Ալիին ալ զարմացաւ այս բա-նիս՝ երբ գրով իմացուցի իրեն)։ Այս երկուքին միջոց երկայնաձիգ նստու-ածքն կամ գոգն է իբր 100 կամ 150 ոտք խոր. երկուքն ալ թեթև կերպով բոլորած գմբեթաձև են, կամ լայն կորնիթարդ պտկունք ձեան, որոց վրայ ոչ ժայռի նշան կայ և ոչ այն խաչերուն՝ զոր նախ բառոդ և յետոյ խոտոքոյ կան-գնեցին, ինչպէս որ Նոյի տապանի նը-շան ալ չկայ։ Մոքբերնիս եկած տղայու-թեան ատեն տեսած պատկերնիս, ուր տապանն տափակ կլոր խոտաւէտ բար-ձրաւանդակի մը վրայ նստած է, ուսկից ջուրերն կը քաշուին, մինչդեռ նահա-պետն պատուհանէն կը նայի, բաղդա-տենք այս ձիւնալից գոգին հետ, որ գրե-թէ ճիշդ բաւական է տապանը կրելու, և չորս կողմի գետնէն 15000' ոտք բարձր է։ Հրաբղխի բաժակի ամենեին նշան չկայ հօս. բովանդակ գագաթն եռան-կիւնի ալէձեւաւ դաշտակի մը կը նմա-նի, գրեթէ Լոնտրայի Կրին-Բաքի կի-սէն քիչ աւելի ընդարձակ, որ թեթև կերպով հիւսիս-արևմտեան կողմը կը ցածնայ, ընդարձակ դարաւանդերով նը-ման ձեան սկլիկի դաշտակներու, աւելի նուազ դիւրէջ հիւս-արևելեան կողմէն, մէկալ ամեն կողմերն սեպացեալ. իսկ արևելեան կողմն փոքրիկ ձիւնադաշ-տակէ մ'անդին ահաւոր զահավէժներ ունի՝ Ակոուլ վէրին վրայ կախուած։ Եթէ մէկն չգիտնար թէ այս լեռս չի-ջեալ հրաբուղխ մ'է՝ ամենեին չէր կըր-նար գուշակել գագաթը տեսնելով։ Բայց անցեալ դարուս մէջ, յետ վերա-բերվման մեծ կենդրոնական լերին ծիւնանին, (որ անշուշտ շատ աւելի ա-ռաջ եղած է քան իր կողից վրայ ե-ղած փոքր կոներուն ներգործած ժա-մանակն), ամեն տեսակ փոփոխու-թիւններ կրնան եղած ըլլալ. կրնայ ըլ-լալ որ մեր հիմայ տեսած գագաթն ալ հին բաժակի մը յատակն ըլլայ, որուն քարեղէն շրթունքն ալ խորտակած ըն-կած ըլլան. չորս դին դիտելով անհա-ւատալի կ'երևի որ հրաբղխային կրակ-ներ այս տեղը բորբոքած ըլլան, որ հիմայ միանվենաւոր ձմեռուան մէջ պա-տած է։

digitised by A.R.A.R.@

թէ և տեսարանն անչափելի կերպով մեծ և ընդարձակ էր, այլ նոյնչափ ալ անորոշ. ամեն լեռնաշնին դիտէ՝ որ բարձրագոյն տեսարանք քիչ անգամ լուսագոյնք ալ կ'ըլլան. իսկ հօս այնքան բարձր էր դիրքն՝ որ բլուր ու ձոր իրարմէ չէին ջոկուեր։ Արարատ այնքան իր շրջակայ լերանց վրայ կը վերանայ, աւելի քան զՍպիտակ Լեառն և զԷլպրուզ՝ իրենց շրջակայից, որ անոնք պարզ բլրակք կարծուին հարթայատակ գետնի մը վրայ։ Իրեն հետ հակառակողք միայն կովկասու մէջ կրնան դտնուիլ, որ և կրնայ տեսնուիլ բոլոր հիւսիսային հորիզոնին վրայ։ Կաղբից լեռն (Քազվէկ) և Էլպրուզ՝ որ 280 մղոն հեռու է, կրնան ասկէ տեսնուիլ, բայց ես չեմ կրնար ըսել թէ ատուգիւ տեսայ զանոնք, վասն զի օդն այն կողմէն շատ պայծառ չէր. աւելի որոշ կ'երևէին Ցաղատանի լերինք իբր 150 մղոն հեռու, աւելի մօտիկ Սևանայ ծովուն եզերքը պատող ցած լեռներուն կռնակէն. ասոնց ալ մէկ փոքր մասն կ'երևէր։ Գարապաղի սոսկալի սևակարմիր լերանց ետևէն աշխատելի էր տեսնել գիծ մը՝ որ նշանակէ կասպից ծովը, կամ կուր գետոյ ստորին հովիտը. բայց այնքան հեռուէն (260 մղոն) անկարելի էր որոշել ծովուն երեսը. այս ալ կայ՝ որ կասպից ծովն հորիզոնէն ալ ցած է. անոր համար ընդունելի չէ (բայց եթէ լուսոյ ճառագայթից բեկբեկմամբ) նաւորդաց ըսածն՝ թէ կասպից ծովը նաւելով՝ տեսած ըլլան Արարատայ ճերմակ կոնը։ Աւելի մօտանց իբրև 40 մղոն միայն դէպ 'ի հիւսիս՝ կը կանգնի մեծատարած մարած հրաբուղխն Արագած, իր երեք սուր ցցուած սև քարաժայռ սարերով, որոց միջոցն էր բաժանն, և 'ի յատակն ալ ձեան հետք կան։ Իսկ աւելի մօտ՝ կ'երևնայ Երևանայ դաշտն՝ լերան հիւսիսային և արևելեան կողմը, երասխն ալ մէջը բարակ արծաթի երեզի մը պէս պտըտելով. գետնի թեթև բարձրութիւն մը կը ցուցնէր Երևան քաղաքին տեղը. բայց անոր պարիսպաց և այգեաց պայծառ կանանչն՝ այս հեռաւորութենէն կորսուած էր. թէ և անոր վանճառափողցին միջէն նայելով կարծուի թէ Պասիս գլխուդ վրայ կը կանգնի։ Ուղղակի դէպ արևմուտք դիտելով՝ Ցօրոս լերանց գագաթն կարնոյ մօտիկ Պինկէօլի հետ խառնուած՝ չէր երևնար հողմավար ամպերով պատած ըլլալով այն կողմն. բայց հիւսիսային արևմտակողմն երասխայ վերին հովիտն կրնար նշմարուիլ ինչուան Անի՝ Հայոց թագաւորութեան մայրաքաղաքն, և Ալիքսանդրապօլ Ռուսաց ամրոցն, և անոր հակառակորդ Ղարսայ ամրութիւնքն։ Դէպ 'ի հարաւ և հարաւային արևմուտք՝ աչք կը թափառէին լերկ սևակարմիր լերանց ամայութեան վրայ, որոց կողերն ձմեռնային հեղեղներէ կարած՝ սև գծերու պէս կ'երևէին. բայց ոչ ծառ մը, ոչ կանաչ կտոր մը անոնց այրած մրկած գաւակաց վրայ. գաղաթանց վրայ ալ հաղիւ կտոր մը ձիւն, թէ և անոնցմէ շատերն ծովուն երեսէն 10 կամ 11000 ոտք բարձր են։ Անոնց միջէն յայտնապէս դուրս կը ցատքէր արևելեան Եփրատայ (Մուրատ-սու) վերին հովիտը պատող բլրոց խոժոռ շարքն։ 40 մղոն հեռուէն դէպ 'ի հարաւ կրնար տեսնուիլ գետոյն աղբերակունքն, անդր քան զդոգն՝ ուր Գայէգիտ պիտի ըլլար, վասն զի ցած լեռնակոհակ մը կը ծածկէր անոր տուները։ Դեռ աւելի հեռու 'ի հարաւակողմն՝ Վանայ ծովուն եզերքէն կը բարձրանար Սիփան լերին մեծ հրաբղխեայ գագաթն. դէպ յարևելեան հարաւ ալ՝ հիանալի զանգուածն Սալաման լերին, որ բոլոր Ատրպատականի վրայ կը նայի մինչև 'ի կասպից ծով։ Ու Վանայ ծովն և ոչ անկէ մեծ Ուրմիայ ծովն կ'երևէին. վասն զի երկուքն ալ՝ թէպէտ և բաւական բարձրադիր են, սակայն բարձրագոյն բլուրներէ ծածկուած էին։ Բայց անոնցմէ շատ հեռուն, իբր 200 մղոն անդին, կը ըցայ նշմարել Ատրբեատանի կամ Հարաւային Քրդաստանի լերանց բաց կապուտագոյն գլուխները, այն Գարտու կամ Կորդուաց լեռները, ուր Քազդէա-

digitised by A.R.A.R.@

ցուց աւանդութիւնն կը դնէ Նոյի տապանին մնացորդքը, և որք կը նային Մուսուլի վրայ և Նինուէի մեծամեծ հողակոյտներու վրայ, որոց քովէն կ'անցնի Տիգրիս։ Ակէ վար և չորս դին՝ մէկ նայուածքով կարծես կը բովանդակէր մարդկային ազգի խանձարուրքը, 'ի Միջագետաց՝ որ 'ի հարաւակողմն մինչև 'ի մեծ լեռնապարիսպն Կովկասու՝ որ կը ծածկէր հիւսիսային հորիզոնը, այնքան երկար դարեր սահմանավայր քաղաքակրթութեան աշխարհի։ Եթէ արդարև այս տեղս էր ուր մարդ երկրորդ անգամ կոխեց յետ երկրիս անմարդանալուն, կրնանք երևակայել թէ ինչպէս եղաւ մեծ սիռումն մարդկան ցեղից այս բարձրաւանդակներէն դէպ յընթացս մեծամեծ գետոց Ալ և Կասպից ծովն 'ի վայր, կամ Ասորեստանի դաշտաց մէջ մինչև յափունս հարաւային Ովկիանու, ուսկից անդին անցան հեռաւոր երկիրներու և կղզեաց։ Երկրիս երեսն ասկէ աւելի մնաց վրայ մեծ տպաւորութիւն ընող կենդրոն չկայ։ Այդ վարի երասխայ հովտին մէջ, ուր Հայոց աւանդութիւնն ընտրած է Դրբախտի դիրքը, այն հովիտն՝ որ երեք հազար տարի զորբարանակաց գլխաւոր ճամբան եղած է, այնքան յաճախ կոտորածոց և աղետից թատր, երկու տեղիք կան որ վաւերական պատմութեան առաջին և հեռագոյն կէտերը կը նշանակեն. մէկն՝ ճիշդ ներքև՝ է աւերակ Արտաշատն, չինեալ ինչպէս կ'ըսուի յԱննիբաղայ և աւերեալ 'ի լեգէոնից Լուկուլլեայ. միւսն աւելի հեռու դէպ յարևմտեան հիւսիս՝ այն գոգն է բլրոց ետևը, ուր Ղարսի ամրոցն է, ուր քիչ ատենէն պատերազմի բոցերն նորէն պիտի բռնկէին։

Բայց ինչ նուաստ բան կ'երևի պատմութիւն և պատմութիւնն հեղինակ մարդն։ Այս տեղը է զոր կը պատուէ նա իբրև հանգիստարան իր ստեղծման և իր պահպանութիւնն աշխարհաւեր ջրոց հեղեղէն, երկիր՝ ուր ապրեցաւ, աշխատեցաւ և մեռաւ իր պատմական յիշատակներէն առաջ, և այնքան դարեր՝ որոցմէ յիշատակ մ'ալ չէ մնացեր։ Պետութիւն պետութենէ ետև բարձրացուց իր պալատները, կրնք կրծնից ետև իր տաճարները՝ այս դաշտերուս մէջ. քաղաքներ կանգնեցան ու կործանեցան, և դարձեալ կանգնեցան՝ քաղաքականութեան և բարբարոսական ասպատակութեան երկար կռուոյն միջոց. բայց այն ամենայն մարդկային փառաց և հանճարոյ գործերէն և ոչ մէկն կրնայ նոր-մարուիլ այս բարձրութենէս։ Երբիս կերպարանքն դարձեալ նոյն է ինչ որ էր քանի որ մարդ չէր սողացած անոր վրայ. լերինք կանգնած են հովտաց եզերքը, ինչպէս որ կանգնած էին երբ հրաբղխային կրակք՝ որ զանոնք վեր դիզեցին՝ շատոնց մարած էին։ Բնութիւնն վսեմական հանդարտութեամբ այս ալեոր դագաթան վրայ՝ իբրև 'ի գահոյս բազմեալ կը խօսի իր զաւակաց հետ միայն մրրիկներով և ժայռերով որ իրենց բնակարանները գետնայատակ կը տապալեն. Պարսիկ բանաստեղծին բսածին պէս. «Երբ դու և ես քօլին ետև անցնինք, դեռ աշխարհս երկար երկար ատեններ պիտի տևէ, մեր գալը կամ երթալը դիտելով, ինչպէս որ Եօթն Դրօվք կը դիտեն հեղեղաքարի մը ընկնալը»։ Սակայն լերինք անգամ կը փոփոխին և կը քայքային. ամեն վայրկեան՝ կոտոր մը թնդալով կը գլորի այս ժանեւոր ժայռերէն՝ խորաձորոց յատակը. ցորեկ ցորեկ և գիշերէ գիշեր սառն, ձիւնն և անձրևն կը փշրեն ամրակուռ որձաքարերը, և քիմիական զօրութեանց անդադար ներգործութիւնն կը լուծէ, կը դարձուցնէ զանոնք իրենց նախնական տարերաց, արձրկելով կազերը, և փշրանքը քշելով 'ի հեղեղս, որք կը տանին կը սփռեն զանոնք դաշտին մէջ. ժամանակ պիտի գայ, (միայն թէ երկիրս դեռ երկայն դիմանայ), որ նաև Արարատայ գագաթն պիտի գլորին և ալ պիտի չերևան։ «Ի սկզբանէ զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան։ Ամենեքեան

digitised by A.R.A.R.@

որպէս զՀորձա մաշեսցին, որպէս վերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին. բայց դու նոյն ես, և ամք քո ոչ անցանեն»։

Ի վերայ այսր ամենայնի կը ստիպուիմ ըսելու, որ թէպէտ զանազան յիշատակներ՝ ի միտք կը բերէ, և վախ ու խորհրդաւոր պատկառանք մը կը տպաւորէ, սակայն տեսարանն գեղեցիկ կամ չքնաղ չէր, այլ մանաւանդ լուրջ, տխուր ու միաձև. դրից անոյշ գոյներն կորսուած թուէին. վերէն տեսնուած լերինքն՝ որոց հաղիւ ոմանց գագաթունքն որոշ կը նշմարուէին, վայրենի կոչտ զանգուածներ կ'երևէին. սիրտ՝ մեծ ամայութեան և տխրութեան զգացմունք կ'առնուր՝ երբ աչք այն ընդարձակ թուխ տարածութեան վրայ ձգուած՝ ի զուր կը ընտռէին ծանօթ կէտ մը. վասն զի այս անհեղեղ լերանց մեծագոյն մասն մեր աշխարհացոյց տախտակաց վրայ անանուն են. և այս անհարթ հովիտներն ալ բնակուած են այնպիսի ցեղերով՝ որոց վերայ գրեթէ ուրիշ բան չեմք գիտեր, բայց եթէ այս՝ որ հիմայ ալ կ'ապրին ինչպէս կրնան ապրած ըլլալ մարդկանց նախ և առաջ սփռուած ատեն։ Մէկ մ'ալ յանկարծ՝ քանի որ ուշադրեցաք դեռ չէին գոհ եղած գիտելէն, մնուշի վարդագոյն դարձեալ չորս դի պատեց, և ես մինակ մնացի այս ճերմակ, լուիկ և ամայի ձիւնագաշտակիս վրայ, որոյ վրայ կար վառ պայծառ երկինք մը, և միջէն սօսափելով կ'անցնէր սուր արևմտեան հով մը. ամպերն կը պատէին, և վայրկենէ վայրկեան ամպոց միջէն կ'երևէին ու կը ծածկուէին հեռաւոր ձորեր ու սարեր ինչուան երկրիս ծայրը։

Այս բոլորովին մենակութենէս զգացած վախս ժամանակին անցնիլը չիմացուց. և երկար ատեն ալ կրնայի առանկ երազելու պէս մնալ, եթէ խոյթողոյ ցուրտն որ բոլոր անդամոցս մէջ կը թափանցէր՝ չարդէր ինձի որ հօն ուշանալս կրնար վտանգաբեր ըլլալ։ Ժամն երկու և կէս էր. ըսել է որ հազիւ չորս ժամ մնացեր էր ցորեկուան լուսոյ. և թէպէտ քարեր դիզելով նշան դրեր էի՝ բայց կարելի է դժուարաւ գտնելի ճամբաս. լերան վրայ դիչեր մը առանց կերակրոյ և առանց ծածկոցի՝ ինչուան հիմայ հանդիպածէն շատ աւելի ծանր բան էր. սակէ զատ՝ վարը սպասող բարեկամս ալ կրնար հոգով տագնապել. մանաւանդ որ խաղախաց հետ խօսիլ չկարենալն և պաշարի պակասութիւնն շատ դժարաւ կրնար իրենց սպասել տալ ինչուան միւս օր։ Ասով պէտք եղաւ որ մէկդի թողում լերան հիւսիսային և արևմտեան կողմէն վար իջնալու փափաքս, աղէկ մը այն կողմերու կազմուածքը քննելու համար, զոր ինչուան հիմա ոչ ոք ըրեր էր։ Ուրեմն շուտ մը վազելով այն գիւրէջ գաւակէն՝ երկու գագաթանց միջոց հովիտն եկայ, արևելեան գագաթան ձիւնեղէն պատը ճանկեցի, և սառնակացինով ըրած նշաններուս վրայէն գնացի ձեան միջէն ինչուան ուր որ ժայռերէն բաժնուեր էի։ Այս վայրկենին մէգն այնքան թանձր էր՝ որ շիտակ ճամբան կտրելն անկարելի էր. վասն զի թէպէտ և կողմնացոյց մ'ունէի՝ բայց Աբարատայ պէս հրաբղխի լերան մը վրայ սրոյ քարերն ի են երկաթով՝ շատ վրատահանալի չէր։ Ատենաք Պէն-Նևիս[1] լերան գագաթը տեսեր էի՝ որ մանիսային աղեղն ամէն կողմ կը դառնար։ Մէկ մ'որ փիրուն քարանց գաւակին հասայ, ճամբան անտարակոյս եղաւ, վասն զի երկու կողմէն ձիւնանիստք կային, թէ և գետնին լպրծուտ հանգամանքն կը հարկադրէր կամաց կամաց և զգուշութեամբ յառաջել. յատակին մնտփորձութիւն եկաւ սահելու ձախակողմեան նեղ ձիւնանիստէն, բայց շատ անհարթ և գժուար եղաւ. և ըմբնցաւ մէկ գլորելովս և քիչ մը վիրաւորելովս. այս եղաւ այս օրուանս մէջ իմ մէկ պզտիկ ձախորդութիւնս։ Քանի մը վայրկեան վերէն հասայ վերոյիշեալ

[1] Սկսուիս լեռ մ'է, 1330 մեդր բարձրութեամբ։

digitised by A.R.A.R.@

հրաբղխի մեծ պատառուածին վերի ծայրը, որուն արևելեան կողմէն առ. տուն ճանկելով վեր ելեր էի՝ անոր ա. րևելքը եղած քարէ կողից քիչ մը գա. ւակին քիչ մը գագաթին վրայ։ Ա.յս քարակողից դագաթէն վար դիտելով կ'երևեր թէ պիտի կարենամ աւելի կարճ ճամբով իջնել քան ինչ որ ըրեր էի, կոնին արևել–հարաւ–արևելեան կողմէն երթալով փոքրանակ ուղղակի հարաւային արևելքէն երթալու։ Ա.յս գիծը բռնելով, որ շատ դժուարութիւն չու. ներ, բաց 'ի այն տեղերէն ուր սահած անկիւնաւոր քարերու կտորներն ա. նանկ մեծ էին որ անոնց վրայէն և միջէն ճանկռտելու համար շատ ատեն կ'ան. ներ, վերջապէս իջայ մէկ ընդարձակ ձիւնանիստ մը, ուսկից անցնելուս ատեն գժբաղդաբար սառնակացինիս ծայրը կոտրեցաւ, զոր Ա.բալբիսի զինուորա. կան հիւսն անաղուստ կերպով մը հատատաեր էր. աղէկ որ ճամբան շատ կոր չէր՝ որ վտանգաւոր ըլլար. բայց զգուշութեամբ և կացինին գլխովը կո. խելու տեղ բանալով, կամ սառերը բռնելով, անվնասդ անցայ և հասայ ուրիշ ցրուած քարերու տեղ մը, անկէ ալ վար նոյն հարաւ–արևելեան ուղղու. թիւնը բռնեցի, և ինձի այնպէս երև. ցաւ թէ ճանչցայ այն երկայն կոհա. կը որ առաջուն այնչափ զմեզ յօգնե. ցուց. ձախ կողմէն կը բարձրանար թա. թարաց Դաշ–գիլիսէ անուանած գա. գաթն, և անոր ստորոտը յիշեալ կոհա. կին գլուխն էր՝ ուր բարեկամս և խա. զախն դադարեր էին. հիմայ կը մնար ին. ձի այս տեղը գտնել։ Ա.յս միջոցիս ա. րևն լերան հարաւ–արևմտեան կոհակին ետեր դացեր էր, և իր հակայաձև չուքն ընկեր էր երասխայ ընդարձակ դաշտին վրայ, մինչ դեռ Մարաց կար. միր լեռներն հեռուէն՝ հարաւ–արևե. լեան կողմէն՝ ալ աւելի կարմիր կը փայլէին, և արևուն մնոնելուն ատեն պայծառ ծիրանեգոյն փոխուեցան։

Վախնալով որ չըլլայ թէ մեր ճամ. բարին տեղը կորուսանեմ, ընթացքս երաշեցի... վերջապէս տեսայ երկու խազախ՝ որ կեցեր էին այն աւազուտ ու խճուտ գաւակին եզերքը՝ որ առաջուն այնչափ տաժանելի եղաւ, և քիչ ատե. նէն պոռալով ձայնս լսեցուցի անոնց։ Իրենց հասած ատենս ժամն վեց էր. և թէպէտ այս 12200 ոտք տեղ դեռ բա. ւական վերջալոյս կար՝ Ա.բալբիս և Ա.ր. տաշատայ աւերակքն վարը մթան մէջ ծածկուած էին։ Քանեհինց վայր. կեան ալ քալելով հասանք հօն՝ ուր Քուրդք և միւս խազախք դադարեր էին, և մինչ դեռ մութն ալ վրայ գալով հա. գիւ երկու երեք քայլ հեռուէն զիրար կը տեսնէինք՝ բարեկամս ալ հօն հա. սաւ։ Ինքն օրուան մեծ մասն անցուցեր էր մեր իրարմէ բաժնուած տեղը, և երբեմն երբեմն անկէ քիչ մը վար այս տեղս ինձեր էր, տեսեր էր Քուրդին յետ գառնալը, բայց չէր կրցած ան. կէ տեղեկութիւն առնուլ իմ վրաս, ժայռերու մէջ շուքի տակ քնացեր էր բաւական ատեն, և երեկոյեան դէմ ելեր էր պտըտելով դիտելու վերեն ե. ղած գաւակը։ Պաշարնիս նայեցանք և ուրիշ բան չդտանք՝ բաց մը հաց, պզտի կտորիկ մը մնդ, երկու հաւ. կիթ և քիչ մը պաղ թէյ։ Բաղդով ոչ ես անօթի էի ոչ նա. արևն զանիկայ զբաղեցընելով՝ քաղցն անցուցեր էր, իմ կերած խմորեղէնս ալ նոյնն ըրեր էր ինձի, ասով ընթրիքնիս չուտով լմընցաւ. քիչ մը տաք թէյ շատ ախոր. ժելի կու գար. չորս շաբաթ Զարին իշ. խանութիւնն տակ ըլլալով՝ թէյի գերի եղած էինք. բայց որովհետև ոչ վառե. լիք կար, ոչ ջուր և ոչ եռացընելու ա. ման, յոյսերնիս յօդն ելաւ։ Ժամն եօթն և կիսուն ըլլան կողը պառկեցանք, բարեկամս կարճութեամբ՝ կոհակին գլուխը, ես մէկ երկու կանգուն իրմէ վար արևելեան կողմը, խազախք և Քուրդք չորս կողմը, ուր կատակներով կը զուարճանային, մինչ մենք կը ջա. նարիք քնանալ.... Կէս գիշերուն ե. լանք, մինչ լուսնի մահիկն ալ Մարաց լերանց վրայէն դեռ նոր ելեր էր. բաղդով հովն թեթև էր. թէպէտև օդն աւր էր, և բարեկամս սատիկ դողը.

digitised by A.R.A.R.@

դարով ելաւ, որ առջի բերան զմեզ փախցուց. սակայն չեմ կարծեր թէ չափահասութիւնն ինչուան սառոյցի աստիճան իջած ըլլար, այլ իբր 36°-40° Ֆարենայդի, որ այսպիսի բարձրութեան համար, իբր 11500 ոտք ծովուն երեսէն վեր, ոչինչ բան է. գժբաղդաբար ջերմաչափ չունէինք, վասն զի միայն ամենահարկաւոր բաներն առեր էինք հետերնիս։

Մթան մէջ մեր խեղճուկ բանակի պիտոյքը ժողուելով և ճրագաց կռնակը բառնալով սկսանք իջնել մութ կոհակներէն և աւելի մութ ձորերէն, խարխափելով մեծամեծ ժայռերու մէջ լուսնին նուազ լուսովը, շատ հեղ մէկզմէկ կորուսանելով երբեմն ալ ճամբան։... Ճամբու հետը չկար, բայց կարծես թէ ճուրդք երթալու տեղը կ'իմանայինք. շատ անգամ խաղաւիք կանգ առին, խոտին վրայ փռուած խօսելով և ծիծաղելով. զիրենք ստիպել աւելորդ էր հիմայ. մենք ալ երբեմն երբեմն այն միջոցները՝ թմբութենէն չկարենալով քայլել, գետին կը տարածուէինք և աչուընիս կը գոցէինք, բայց շուտ մը կ'արթննայինք։ Վերջապէս արուսեակն ծագեցաւ գերազանց պայծառութեամբ. և քիչ մը վերը հասանք փոքրիկ խոտաւէտ դաշտակի մը, ուր երկու երեք ճուրդք՝ որոց հօտերն մնտ կ'արածէին, խուիներով կրակ մը վառեր էին, անոնց քով տարին զմեզ մեր ճուրդերն՝ տաքնալու։ Խաղաւիք դրեթէ ամենքն ալ ոչուրներնէս հեռացեր էին. և մենք (ինչպէս վերջն անդրադարձանք) այս վայրենի սեռագէմ մարդկանց ձեռքը մնացեր էինք, որոց թուրերուն և հրացաններուն վրայ կը փայլէր կրակին բոցն. բայց անոնք չարագործութեան միտք չունէին։...

Ժամն չորսի հինգի միջոց նորէն աքանչելի արշալոյս մը ծագեց. և ճիշդ արեւն ելնելէն առաջ հասանք 'ի Պարտարպուլագ, 'ի գոհութիւն մնաց ձեռֆարայ. և շուտ մը վրանը մոնելով՝ փռուեցանք 'ի գետին քնանալու, յոգնութեան քուն մը։ Ժամն ութին կամ իններին ելնելով, (վասն զի երկուքնուս ժամացոյցքն ալ կեցեր էին), կը վայելէր որ փոքր Մասեաց վրայ ելնէինք, և անկէ իր աւագ եղբօր կաղմուածքը լաւ մը քննէինք. բայց պաշարնիս հատեր էր, խաղաւիք ալ կը փափագէին շուտով դառնալ Յերայլբխ։... Վրաններն վերցուեցան, բեռներն գրաստուց վրայ դրուեցան, ճուրդերուն վարձքն տրուեցաւ՝ իրենց ցորեկուան և գիշերուան ծառայութեանց համար։ Ճամբայ ելնելէն առաջ խաղաւիք վրաններուն կանգնած տեղոյն դիմաց բոլորուեցան և սկսան ռուսերէն երգել. բառերը չհասկրցանք, բայց կարծեմ բանակի երգեր էին, զինուորական դործոց յիշատակք, կամ մնաս բարով ընկերաց. եղանակն ընդհանրապէս ախորժելի և երբեմն սրտաշարժ և ողբական, երկար ատեն մեր մտաց մէջ մնաց. անոնցմէ մէկն մէջ տեղ կեցած պարագլուխ կ'ըլլար, և երբեմն երբեմն ատրճանակ կը պարպէր. մէկայներն երբեմն իրեն հետ կ'երգէին, երբեմն միայն վերջաւորութեանը կը միաձայնէին. ձայներնին աղէկ, երգեցողութիւնն կատարեալ արուեստով։

Օրհասարակէն առաջ՝ ցաւելով մը մնաս բարով տուինք Պարտարպուլագի, և դէպ 'ի դաշտն իջանք, այս անգամ Թաքեալդուի ցցուածքին միւս կողմէն, փոխանակ անոր կռնակէն երթալու, յետոյ Աբրալբխի ցամաք գաւակներէն. ուր հասանք ժամն չորսին, առանց դիպուածի մը, թէ և անդամ մը վախի աղաղակ մը փրթաւ թէ մնտերը անծանօթ մարդիկ կան, և ձեռֆար առաջ վազեց քննելու։ Կարծեմ բարակ չոր օդուն հովահարութեան պատճառաւ՝ որչափ կ'ենթադրէինք՝ չյօգնեցանք։... Երկրորդ առտուն նստանք 'ի դարանդաս [1] և Երասխին անցնելով փոշոտ գերերու միջէն. մտանք նորէն Երևանայ հնոցը [2]։

1 Այսպէս կ'անուանին տեսակ մը կառք Ռուսաց։

2 Սառոյկ տաքութեանը համար այսպէս կ'ըսեմ։

digitised by A.R.A.R.@